

Զ Ա Ր Ե Ն Ց

Ե Պ Ի Բ Ա Կ Ա Ն  
Լ ՈՒ Ս Ա Բ Ա Ց

ՅԵՂԻՇԷ ՉԱՐԷՆԿ

ՅԵՐԿԵՐԻ  
ԺՈՂՈՎԱԾՈՒ

ԳԻՐՔ V.

MCMXXX

---

ՅԵՐԵՎԱՆ · ԴԵՏԶՐԱՏ



Նվիրում եմ այս գիրքս հիշատակին  
Կնոջս, քնկերոջս, հերոսական բարեկամիս՝

ԱՐՓԵՆԻԿ ԶԱՐԵՆՅԻ

(Տեր-Ասվաձառյան)

\*Էտիսնանված 1927 թվի հունվարի 1-2-ի գիշերը  
Յերեվանի Առաջին հիվանդանոցում:

ՅԵ. Զ.

1929. X.

Լենինգրադ

И Музе возвращу я голос,  
И вновь блаженные часы  
Ты обретешь, сбирая колос  
С своей несжатой полосы.

Н. Некрасов



ՆԵՐՔՈՂՆԵՐ ՈՒ ԽՈՅԵՐ

## ՅԵՐԳ ՄԱՔԱՌՈՒՄԻ

«Դժ վոզին եր դա, վոր յերգում եր  
եր վերելքի յերգը, իսկ այդ ծրձաղելի  
ասպետը կարծում եր, թե դա յես եմ  
յերգում...»

Ե դ գ ա ր Պ ո

Вперед, мечта, мой верный вол!...

Валерий Брюсов

### I

Ինչպես ճամփորդ մի, վոր խորդուրորդ  
Ուղիներով ե բարձրանում վեր—  
Այդպես լեկել ես մի առավոտ  
Յեւ ընկել ուղի մի ահավոր,  
Մի ուղի դժվար ու անչափ վեհ:

Տարել ե ուղին քո խորդուրորդ  
Քեզ դեպի անհաս բարձրություններ,  
Յեւ անձրեն ե մերթ քեզ թրջել հորդ,  
Յեւ չերկինքն ե մերթ գլխիդ ձյունել, —  
Դու մաքառել ես, ընկել հաճախ,  
Քսել յերեսը քարերին մերկ,  
Ու չարչարել ես քեզ չարաչար,  
Բայց կրկին, կրկին ձգտել ես վեր:

Արդեն կտրել ես արդեն անցել  
Դու յերկաթ, յերկաթ մի ճանապարհ,  
Յեւ բարձունքներ ես դու ունեցել  
Յեւ անկումներ ես ունեցել հար, —



Բայց դու սրբել ես հոգիդ միշտ ել  
 Ճամփեքի մաքուր, վսեմ հրով,  
 Յեվ միշտ պայծառ ե հոգիդ չեղել,  
 Յեվ սիրտդ լիքն ե չեղել սիրով:

Յեվ սիրտդ լիքն ե չեղել հաճախ  
 Յասման թուլնով ու ատելությամբ,  
 Յեվ կասկածը սե, կասկածը չար  
 Քեզ ճնշել ե մերթ իր ծանրությամբ,—  
 Բայց դու մաքրել ես միշտ ել հոգիդ  
 Կասկածանքներից այդ խաժաղուժ,  
 Յեվ մաքառել ես, վոր չչոքի  
 Քո սրտին յերբեք հոգնության մուժ:

Դու բարձրացել ես մաքառումով  
 Դեպի ահուլի բարձրություններ,  
 Յեղել ես հաճախ արևին մոտ,  
 Տեսել գազաթներ լուսաձյունե,—  
 Յեվ ճանապարհին ինչքան ես դու  
 Քո բուպիկ վոտներն արշուճոտել,  
 Բայց քայլել ես միշտ, քայլել անդուլ,  
 Տքնել անդադար ու կարոտել:

Յեվ չերբ հոգնած ես չեղել դու քիչ,  
 Յերբ ճնշել ե քեզ ուղիդ անհաս,  
 Յեվ ճանապարհի քարերին ցից  
 Նստել ես, վոր քիչ հանգստանաս—  
 Քեզ մեռած են միշտ կարծել նրանք,  
 Այն մարդիկ, վորոնք իրենց որում  
 Վնչ մաքառել են, վոր բարձրանան,  
 Վնչ տեսել սարսափ ու հոգնություն:



Այդպէս ել ալժմ:—Քեզ դիմացից  
Կանսմ, կանչում ե ուղիդ անհաս,  
Յեւ դու ճամփեքի քարերին ցից  
Նստել ես, վոր քիչ հանգստանաս —  
Իսկ նրանք ահա, չարախնդում,  
Տաք ճահիճների տիղմին հլու՝  
Հանգուցելոց են արդեն կարդում  
Յեւ յերկում քեզ մահ ու ալելու...

Բայց դու հանգիստ ես:—Սրտիդ խնդուն  
Յեւ մտքերիդ մեծ, և՛ հուզերիդ  
Իջել ե մի նոր իմաստութուն՝  
Յե՛ւ պայծառ, և՛ ջինջ, և՛ մտերիմ:  
Քիչ հետո պիտի դու բարձրանաս  
Յեւ մաքառումի յերկով անդուլ  
Կրկին տքնաջան պիտի գնաս,  
Յեւ ուղիդ պիտի լինի խնդուն:—

||

Ձգվում ե անա քո դեմ ուղիդ  
Դեպի նոր, անհաս բարձրութուններ,  
Յեւ զգվում ե քեզ բույրը հողի  
Յեւ գազաթների շունչը ձյունե.  
Յեւ մենակ ես դու կրկին ահա,  
Յեւ դարերն են քո շուրջը լերդում,  
Յեւ արեգակն ե, վորպէս վահան,  
Բարձրանում քո նոր այս յեղիւրդում:

Յե՛նում ե քո նոր այս յեղիւրդում  
Մի չտեսնված, մի նոր արեւ,  
Բարձրանում ե հուր, խնդուն յերգով  
Քո վերջին, վերջին լեռան վերեւ.

Վերջին գաղաթն ե քո դեմ ցցված՝  
 Քարքարոտ, անհաս ու ձյունածիր,  
 Դու վերջին անգամ պիտի զգաս  
 Բարձունքի ցնորքն անծայրածիր:

Ո, վերջին անգամ խնդուն յերգով  
 Թոթափիր հոգիդ ու բարձրացի՛ր,  
 Ժպտով անհուն նայիր ներքև՝  
 Դաշտերում ծագող լուսաբացին—  
 Ու քալիր անդուլ, քալիր կրկին,  
 Թող նորից հոգիդ արյունոտի,  
 Բայց ճահիճների ճղճիմ լերդին  
 Թող չերբեք, չերբեք չկարոտի:

Ներքևում ահա, լեռան լանջին,  
 Ուր կան խարույկներ ու արոտներ,  
 Ինչպես ցնորքներ ու մտքեր չնչին—  
 Չգվում են նեղլիկ արահետներ:  
 Մարդիկ են ահա աճնտեղ հածում  
 Յեվ արածում են աճնտեղ գառներ,—  
 Բայց ուղին, ուղին քո մահացու  
 Արահետներին դու չխառնես:

Յեղիր վերջին դու, չեղիր հետին,  
 Թող լինի ուղիդ որհասական,  
 Քո ճանապարհը չերբեք, սակայն,  
 Չխառնես նրանց արահետին:—  
 Մաքառիր անդուլ, գնա վերև,  
 Քո գաղաթնային չերզը չերգիր,  
 Վերելքը թող քեզ տանջանք բերե,  
 Յեվ արյուն ծորա թող քո վերքից—



Յեվ ուղիղ լինի թող հիմա ցուրտ,  
Յեվ վերելքդ թող լինի դժվար,  
Անկումդ լինի թող մահացու,  
Թող գագաթը քեզ անհաս թվա—  
Քալվեր դու սակայն, գնա անդուլ  
Դեպի քարքարոտ բարձրություններ—  
Յեվ յեթե ընկար—բուքն հոնդուն  
Թող վերջին խինդով վրադ ձյունե...



## ՅԵՍ ԱՅՆ ՉԵՄ ԱՅԼԵՎՍ

(Ներբող լիբիքական)

ՊԱՏԱՍԽԱՆ ԹՇՆԱՄԻՆԵՐԻՍ

Յեվ գիտեմ յես հիմա, վոր համար ե,  
 Առորդա աշխատանք ե անդուլ—  
 Այն ամենը, վոր վարար, հողմավար եր,  
 Վոր գալու յեր յերգով ու խանդով . .

Յ Ե. Զ.

Ո, դուք, ասպետներ չնչին դավերի,  
 Ի՞նչ էք քչփչում ճանկերդ սրած.—  
 Յես վողով հիմա պինդ եմ ավելի,  
 Ավելի տոկուն, քան ելի առաջ:  
 Յեվ չեթե չերգով յես ասում եմ, թե  
 Յես այլ եմ հիմա, այլևս այն չեմ—  
 Նշանակում ե՝ նոր հուն եմ մտել՝  
 Ավելի խորունկ, ավելի անշեղ:

Յես հախուռն ելի, ինչպես պղտոր գետ,  
 Յեվ սրտով թեթե, ու չերգով շոտլ—  
 Յեվ վողով այսոր չեմ փոխվել թեպետ,  
 Դարձել եմ, սակայն, ծանր ու ժլատ:  
 Իմ հոգին այսոր ել չի մանրանում,  
 Չի մսխում իրեն թովում խոսքով—  
 Այգպես ցողունն ե հանդում ծանրանում,  
 Յերբ լցվում ե ձուլլ, իմաստուն հասկով:

Յես այն չեմ հիմա. . Հույզերիս քամին,  
 Վոր քշում եր ինձ անկումից անկում—

Հանգստացել ու նստել ե հիմի  
 Յեվ ամեն կանչի չի արձագանքում:—  
 Ել չի հռնդում սիրտս վայրենի,  
 Ինչպես դաշտերում նժույգ սանձարձակ:—  
 Գլխից ինձ սիրով մի ձեռք հայրենի,  
 Յեվ չես մի գիշեր իմաստուն դարձա:  
 Հասկացա հոգով, վոր կյանքի հանդուժ,  
 Մարդկային ծփուն ծովում հողմածեծ  
 Միայն յերգերով ու անձե խանդով  
 Ո, վնչ մի ցողուն գեռ չի բարձրացել:  
 Յես ձեռք քաշեցի կրքերից վարար,  
 Զգացմունքների հորձանքից անձե—  
 Յեվ աշխատանքի բոցը փրկարար  
 Իմ անձրևածեծ չերեսը խանձեց:

Ու դաշտ եմ չեղնում չես կրկին ահա,  
 Ինչպես հնձվորը չեղնում ե հնձի,  
 Թմբկի փոխարեն ձեռքերիս պահած  
 Խոհով ծանրացած քնար պղնձի:  
 Իմ գլխի վերև կեսո՞ր ե արդեն,  
 Ամռան արևն ե կանգնել գենիթում,  
 Իմ դեմ—խոհերի չհնձած արտեր,—  
 Յեվ հոգսն ե ահա հոնքերը կիտում:—  
 Ինչքան եմ վատնել չես անդին ժամեր,  
 Յեվ ինչքան հունտեր ցրել եմ ձրի,—  
 Յեվ ինչքան պիտի հիմա աշխատեմ,  
 Վոր գտնեմ չես այն, ինչ զո՞ւր կորցրի...  
 Յես շոսչլ չեղա, վորպես սերմացան,  
 Ժլատ կլինեմ՝ յեղնելով հնձի,—  
 Յեվ աշխատանքի բոցը սրբազան  
 Թող մինչև գիշեր ճակատս խանձի:—



Վորքան աշխատանք ու խոհ կա այստեղ,  
 Յերկաթավորվող իմ հայրենիքում,  
 Վորի վրայով հողմեր են անցել  
 Յեզ մեզ լվացել հրե մրբրիկում:—  
 Վորի դարերից գոսացած դեմքին  
 Փչել ե ախոր շունչը Լենինի,—  
 Կիզվել ե հրով յերկիրը հիմքից  
 Ու շոնդալով շինվում ե հիմի:  
 Առաջին անգամ իմ հայրենիքում,  
 Ուր հոսում եյին արնահուն գետեր—  
 Այս այգաբացի լերթը զրնգուն  
 Իմ բարձրաշառաչ վերզն ե ավետել:  
 Հիմա՝ վաստակած ու ձեռքիս քնար՝  
 Յելնում եմ ահա կրկին ժպտադեմ,  
 Վոր սերունդների գործին անկորար  
 Խոհով ծանրացած իմ յերզը խառնեմ:

Յես չեմ լերգելու այժմ շառաչուն  
 Գալիքի մասին, վոր զալու յե դեռ.  
 Իմ ներսում հիմա հուզվում են, աճում  
 Ու շարժվում ուրիշ խոհերի գնդեր:—  
 Ներկան ե հիմա իմ դեմ աղմկում,  
 Ինչպես կրքերի ամհհի մի ծով,—  
 Յեզ անցնում եմ լես, քնարս բեկուն,  
 Այս հազարագունյն ոլկիանի միջով:  
 Անցնում եմ՝ իմ նոր խոհերին գերի—  
 Յեզ շուրջս ահա, մոտիկն ու հեռուն,—  
 Անքուն կրքերի, զգացմունքների  
 Լայն, անծալրածի՛ր ովկիանն ե լեռում:

Ճամփա չեմ չեղնում չես ահա մենակ,  
Քնարս ե միայն ինձ հետ միասին,—  
Յեվ չերգում եմ չես, չերգում եմ անահ  
Իմ պաշտպանած խոհերի մասին:  
Դժվար կլինի իմ չերթը հիմա,  
Դժվար ու դժնի, քան յերբևիցե,  
Յեվ ճամփիս գուցե ոձերի նման  
Ինձ արյունոտեն ժանիքները ձեր—  
Բայց պինդ ե վողիս... Ու վոչ մի ժանիք  
Ինձ չի բաժանի իմ անդուլ դարից,  
Ինչպես վոչ մի ուժ ինձ չի բաժանի  
Իմ շահագալից, պաշտոն քնարից...



## ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆՆԵՐԻՆ

(Ներբող քաղաքական)

О чем шумите вы ?...

А. Пушкин

Լծված տերերի շառաշուն կառքին՝  
 Հոնդում եք դուք ալդտեղ վայրահաչ,  
 Փանգոտած սուսեր ձեռքերիդ պահած՝  
 Անկում եք կարդում իմ նոր աշխարքին:  
 Ո, դուք, վողբալի պնակալիզներ,  
 Բռնակալների մի հետին քուրճում  
 Կծկված՝ արգլոք կարճ եք տեսնել,  
 Թե ինչով ենք մենք ապրում ու շնչում:  
 Կարճ ե արդյոք ձեր դեղին վողին,  
 Վոր սնվել է լոկ հրով ու արյամբ—  
 Ծառս չլինի ու չբողոքի  
 Իմ յերկրի հանդեպ, վոր հավետ հարյավ:  
 Դուք չեք հրդեհով միշտ շառագունել  
 Ու լերկերն հանձնել սրի ու հրի,  
 Ո, դուք, արշինի լերկրպագուներ,  
 Ասպետներ վոսկու ու մառգերի:  
 Դուք չեյլիք արգլոք, վոր բախտը այս մերի,  
 Բազում սրերով զարկած աշխարքի  
 Ձեր պիղծ ձեռքերով կապեցիք յերեկ  
 Բռնակալների արնածոր կառքին:  
 Դուք չեյլիք, վոր մեր այս բազմալիզու  
 Յերկրի առաջին այգարացին դեռ,  
 Գործերով ձեր պիղծ, ու ժանա, ու քսու  
 Դարձաք բռնակալ ցարերին ընկեր:  
 Յիվ ըմբոստութւան շունչը դեղեցիկ,

Վոր հառնում եր այն դժնի որերում—  
 Դուք չեյի՞ք, վոր ձեր ձեռքով ինդղեցիք  
 Այն ազգամիջյան սև հախճիրներում:  
 Դուք չեյի՞ք, վոր վողջ ժողովուրդը իմ  
 Այն անորինակ փորձության ժամին  
 Բշեցիք դեպի դաշտերը ուղմի,  
 Վորպես հավելյալ թնդանոթի միս:—  
 Անշեղ ե յեղեղ ձեր ուղին միշտ ել,  
 Դուք պատվով եք ձեր պաշտարը տարել—  
 Յեվ դա—տերերի պաշտարն ե չեղել  
 Իր յերթին չեւած ժողովրդի դեմ:  
 Դա չդադարող պաշտարն ե չեղել  
 Ձեզ կյանքի կոչած դասակարգերի,—  
 Յեվ ձեր գործերի պսակն հրեղեն  
 Յեղեղ ե յերկիրն՝ արցունքի հեղեղ,  
 Յեվ ժողովուրդը՝ կրկնակի գերի:—

Վոր դժոխքն ե ել ձեզ այդպես հեզնել  
 Ու լցրել այդքան անմիտ ցանկութեամբ,  
 Վոր տե՛ր եք ուզում դուք աշտոր կանգնել  
 Դարերի՛ն ավանդ մեր ժառանգութեան:—  
 Դուք տեր եք ուզում ձեզ հայտարարել  
 Այն հերոսական, հսկա պաշտարի,  
 Վոր ժողովուրդն ե իմ չերեկ վարել  
 Ընդեմ բռնակալ սուլթանի, ցարի:  
 Դժգոհ ե չեղել իր վզին հստած  
 Բռնակալներից նա բազմապիսի—  
 Դուք նրա վսեմ ընդվզումը այս  
 Յենթարկել եք միշտ ձեր մութ չերազին:—  
 Նա ծանոս ե չեղել տիրողների դեմ՝  
 Լինելով անհայ վաստակի գործիք,—  
 Դուք ըմբոստութեան այդ տենչը վսեմ



Աշխատել եք միշտ ցանցել ու լծել  
 Թե հայ, թե ոտար տերերի գործին: —  
 Լեռնացել ե նա, իր սիրտը սրբել  
 Արհավիրքների հրե հորձանքում —  
 Դուք նրան դավել, մեջքից եք խփել  
 Ու տարել անվերջ անկումից-անկում: —  
 Ձգտում եք հիմա պայքարը այդ մեծ  
 Ձերն հախարարել մտքերով մթին, —  
 Մենք չենք տա սակալն այդ պսակը ձեզ,  
 Ձի սաղում նա ձեր արնոտ մուկին:  
 Իզմուր եք վռնում ալդպես վայրահաշ  
 Դուք անկախության պալքարի մասին. —  
 Դա մերն ե հիմա, դա մերն եր առաջ,  
 Վորքան ել դավով դուք բազմապիսի  
 Փորձեր եք արել, փորձում եք հիմա,  
 Ինչպես միշտ՝ ահա կրկին ու կրկին  
 Մեզ քշել դեպի կործանում ու մահ,  
 Մեզ լծել, ծախու գրաստի նման,  
 Թե հայ, թե ոտար տերերի կառքին:

Ինչպես աշխարհի ճորտերին բոլոր,  
 Այնպես ել գերի աշխարհին իմ հին —  
 Յերկինք մի մաքուր, արե մի բոսոր  
 Լոկ հոկտեմբերյան հողմերը տվին:  
 Մեզ ասին նրանք, վոր կյանք մի վսեմ  
 Կերտելու համար հարկավոր ե նախ  
 Ձեր դեմ մահացու պալքար սկսել,  
 Ձեզանից լինել հեռու ու անկախ:  
 Յեվ կրում ենք մենք այդ պայքարը վեհ  
 Մեր յերկրի անկախ արևի ներքո,  
 Վոր Լենինն ե մեծ մեզ մի ուր տվել՝

Պրոլետարիատի հաղթական ձեռքով:  
Վռոնացեք այդտեղ, վորքան կամենաք,  
Ու սրեք մեր դեմ սուսեր ժանգոտած,—  
Մենք կլնենք անհաղթ, մենք կլնենք անսհ,  
Յերբ թնդանոթը մեր դեմ վորոտա:—  
Իսկ մինչ այդ՝ կապված ամբողջ աշխարհի  
Պալքարի չեւած ստրուկների հետ՝  
Կերտում ենք ահա մի շենք վիթխարի,  
Վոր շիրիմն է ձեր լինելու հավետ:—  
Մաքառում ենք մենք՝ մեր յերթին լծված,  
Աշխատում անդուլ, կերտում, կառուցում,—  
Յեվ վաղվա անմար հավատով լցված՝  
Յերգում ե քնարն իմ պղնձաձուլ...



ԹՈՒՂԹ ԲԱՆԱՍՏԵՂԾ ԲԱՐԵԿԱՄԻՍ՝ N. N.-ԻՆ, ԳՐՎԱԾ  
ՅԵՐԵՎԱՆԻՑ

Ահա կրկին գրում եմ քեզ,  
Իմ լավ ընկեր, իմ բարեկամ,—  
Ո, քեզ. անհատ, բայց մեծ լերդիչ,  
Վողջո՛ւյն, վողջո՛ւյն պոետական։—  
Գրում եմ քեզ չես պարզ հանգով,  
Ռիթմով հստակ, լամբով մեկին,  
Գրում եմ քեզ կարոտանքով,  
Ինչպես Պուշկինը՝ Դելվիգին...

Սրտով խաղաղ եմ յես հիմա  
Ու խոհերով հստակ, մաքուր։  
Իջել ե իմ սրտի վրա  
Զարմանալի հանգստություն։  
Ձեմ լմանում ինքս ել սակայն,  
Թե ի՞նչը ինձ ալսպես փոխեց.  
Քայլ եր սա մի հերոսական,  
Թե՞ տարիքս են արդեն կոխել։—

Դարձել եմ լուրջ, ինքնավստահ,  
Չեռք եմ քաշել հիմա մանրից...  
Իմ սենյակում չերեկ նստած՝  
Կարդում ելի Ալեքսանդրին։  
Կարդում եյի... Յեվ իմ հոգին  
հսկա մի խինդ եր վողողում.—

Այդքան պայծառ ու ահագին  
Արեգակն ե միայն շողում:

Յեւ կարդալով Ալեքսանդրին՝  
Կրկին անգամ չես հասկացա,  
Թե ինչո՞ւ յե նրա անդրին  
Սնրունդների սրտում կեցած:  
Թե դարերի հորիզոնում  
Զսուզվելով՝ ինչո՞ւ յե նա  
Անվերջ շողում ու բարձրանում  
Յեւ միշտ պայծառ պիտի մնա: —

Գրում եմ քեզ ահա չես հին  
Պատասխանը այդ հին հարցի.  
Թե ուզում ես չերգդ լսեն՝  
Ժամանակիդ շունչը դարձիր: —  
Կապվիր նյարդով յուրաքանչյուր  
Քո որերին ու քո դարին,  
Կյանքը սիրիւ լիաննշյուն  
Ու մի՛ դավիւր քո քնարին: —

Հարկավոր ե ձուլվել դարին,  
Ասում եմ չես... Բայց կա՞ արդյոք  
Այդքան անհուն ու դժվարին,  
Այդքան թե պարզ, թե բարդ մի գործ:  
Մարդիկ կան, վոր կարծում են, թե  
Ով ավելի բարձր ե գոտում՝  
Նա չե միայն դարի տենդով,  
Դասակարգի խունդով չեռում:



(Մի ժամանակ, դժբախտարար,  
 Յեւ ել ելի ալպեան կարծում,  
 Բայց վերցրած պաշտառ քնար՝  
 Ազատվել եմ ահա փորձում  
 Այդ մարմաջից... թեկուզ... թեկուզ...  
 Ապագայում գուցե ցավեմ,  
 Քանզի դա եւ՛ հեշտ եր, եւ՛ պարզ,  
 Յեւ անփնաս, եւ՛ շահավետ... )

Մեր շուրջը, տես, ինչքան դեմքեր,  
 Ինչքան մարդիկ՝ շեփոր առած,  
 Յերգում են գործ, յերգում են տեմպ,  
 Յերգում յերգե՞ր բարձրաշառաչ։—  
 Յերգում ե, տես, գիշեր ու գոր  
 Պսեռներ ժի վողջ բանակ,  
 Սակայն յերգեր քիչ կան այսոր,  
 Այլ կա հաճախ թուղթ ու թանաք։

Մեծ ե այսոր բանակը մեր,  
 Թե բոլորիս քշեն գինվոր՝  
 Կառնենք գյուղեր ու քաղաքներ,—  
 Բայց յերգեր ենք գրում այսոր։  
 Յերգում ենք սեր, յերգում ենք մահ,  
 Յերգում պայքար ու աշխատանք,  
 Մեր յերգերում, սակայն, չկա  
 Այսոր վո՛չ սեր, վո՛չ խոհ, վո՛չ կյանք։—

Ի՜նչ են մեր մեծ դարի հանգեպ  
 Յերգերը մեր թոթովախոս...։

Մենք, վոր մի նոր կլանք ենք կանգնել  
 Չունենք յերգեր հատու ու խոր:  
 Ինչ գրել ենք մինչև հիմա՝  
 Յեղել է լոկ առաջարան  
 Մի վիթխարի չերգի համար,  
 Վոր գալու յե, բայց դեռ չկա:

Չհախառն գու ինքնագոհ  
 Պոետներին այն մեր բազում,  
 Վոր հմայված իրենց չերգով՝  
 Ներբողներ են իրար ասում:  
 Շատ է չնչին մեր ապագան,  
 Թե վոր զրանց չերգին նայես.—  
 Ո, դարը մեր հերոսական  
 Այդ չերգին է միթե վայել...

Բայց նա կգա, պոետն այն մեծ,  
 Մեր յերագած պոետը նոր,  
 Յեվ ներկայիս մարդուն կերգե  
 Յերգով իր վեհ, ու բորբ, ու խոր:  
 Պղնձածուլ իր քնարով  
 Շունչը կերգե այս մեծ դարի,  
 Կայրե սրտերը սուրբ հրով—  
 Ու չի դավե իր քնարին...

Մեր վիթխարի դարը ահա  
 Շառաչելով, ընդեմ հնի,  
 Բարձրացրել է, վորպես վահան,  
 Հսկա անունը լենինի:  
 Յեվ ուր առաջ բանտ եր խավար,



Ճորտությունն եր ուր լուռ քնել—  
Ալեկոծվում են հողմավար  
Անծայրածիր բազմություններ:

Աղակում ե հողմանման  
Սոցիալական ծովը հիմի,  
Կյանքը այսուր որհասական  
Բաղխումների ովկիան ե մի:  
Լեռնացիլ են իրար հանդեպ  
Յերկու հսկա դասակարգեր,  
Ընկնում են հին գահեր այնտեղ,  
Այստեղ կանգնում չեղած կարգեր:

Յեվ այս անդուլ դարում ահա,  
Այս լեռնացուղ ովկիանում  
Ապրում են բյուր մարդիկ հիմա,  
Տխրում, աքնում, ուրախանում,—  
Մարդն ե ապրում, ինչպես առաջ,  
Հուզումներով իր կենդանի.  
Ունի կրքեր բազմաշառաչ,  
Սրտում հազար հուլիներ ունի,—

Յեվ ի՞նչ... այս բորբ, այս կենդանի  
Հույզերը հորդ լերգելու տեղ—  
Միաչքանի, միվոտանի  
Մարդն են լերգում հիմա անթե.  
Մարդն են լերգում, վորի կրծքում  
Յերգեհոն ե դրված կարծես,  
Վոր ճիչեր ե միայն փղձկում,  
Զուներ վո՛չ խանդ, վո՛չ խի՜նդ, վո՛չ սեր:

Սակայն դու չես գտնում արդյոք,  
 Վոր վիթխարի այս մեր դարում  
 Իր հույզերով ու կրքերով  
 Ավելի յե մարդը հարուստ:  
 Ինչե՞ր և նա այսօր տեսել,  
 Ինչե՞ր ասել ու զգացել,  
 Յե՞վ ի՞նչն և նա համարել սեր,  
 Յե՞վ ինչ՞ով և ուրախացել...

Տեսել և նա Հոկտեմբերի  
 Անորինակ պայքարը մեծ,  
 Ընդվզումի տարիների  
 Որերը բոլր ու հողմածեծ: —  
 Կործանումն և տեսել հնի,  
 Պալատների անկումն անդարձ,  
 Տեսել և մահը Լենինի,  
 Կորուստն այս խոր, անվերադարձ:

Տեսել և նա անկումը այն  
 Տարորինակ առաջնորդի,  
 Վոր որերին այն փորձության  
 Առաջնորդեց կարմիր զորքին,  
 Մղվեց մեզ հետ կամքով հաստատ  
 Դեպի պայքար ու հաղթանակ —  
 Յե՞վ լերկրից զուրա հիմա նստած  
 Թափում և լուկ թուլն ու թանաք...

Ինչքան և այս ամենը բարդ...  
 Այս ամենի հետ միասին՝



Մարդը ելի մնում է մարդ,  
 Վոր ունի սեր, վոր ունի սիրտ:  
 Կարճը ես դու՝ յերգիւր նրան՝  
 Իր հուշգերով մեծ ու մանրիկ,—  
 Բայց այսպիսի յերգի համար...  
 Քնարն է պետք Ալեքսանդրի:

Քնարն է պետք Ալեքսանդրի,  
 Ու քնարի հետ միասին՝  
 Ալեքսան անհուն ու անաղին,  
 Այդքան պայծառ ու վեհ մի սիրտ:—  
 Իր միտքն է պետք պայծառատես,  
 Վոր որերի վեճի միջից  
 Հիմնականը մանրից զատե  
 Յեւ վարկաչե ջինջ ու վճիտ:—

Վոր առորյա աղմուկների  
 Միջից տեսնի որը գալիք  
 Յեւ չղաճնա վոգով գերի  
 Ծնծղաներին աղմկալի—  
 Տեսնի վոգով, թե ինչն է, վոր  
 Դառնալու չե եզուց անցյալ,  
 Յեւ ինչն է, վոր՝ հեռու մի որ՝  
 Պիտի կանգնի բարձր ու պայծառ...

Յեւ հա կգա, պոետն այդ մեծ,  
 Մեր յերազած պոետը նոր,  
 Յեւ ներկայիս մարդուն կերգե  
 Յերգով իր վեհ, ու բորբ, ու խոր:—  
 Պղնձաձուլ իր քնարով

Շունչը կերպե մեր մեծ դարի,  
 Կայրի սրտերը սուրբ հրով—  
 Ու չի դավե իր քնարին...

. . . . .

Վերջացրի:— Դիշեր ե խոր:—  
 Յեվ գիշերվա աչա խոր պահին  
 Գլխիս վրա թառել ե լուռ...  
 Իմաստուն բուն Միներվայի  
 Յեվ առույգ ե սիրտս շնչում  
 Կասկածանքներ իմ մեջ չկան:—  
 Դե, ընդունիր հաղաք վողջույն,  
 Պոեռական իմ բարեկամ...



## ԹՈՒՂԹ ԱԿՍԵԼ ԲԱԿՈՒՆՑԻՆ, ԳՐՎԱԾ ԼԵՆԻՆԳՐԱԴԻՑ

Наперебой

Поэты читают и пишут,  
Что, дескать, кто умер — заменим того  
Напрасно мол тучи нависли,  
Что близко рабочее торжество...  
Какие богатые мысли!  
Оставив невыгодность прочих дорог  
На светлом пути коммунизма  
Они получают копейку за вздох  
И рубль за строку оптимизма...

Мих. Светлов, «Клопы»

Ի՞նչ օխրելի Ակսել, չե՞մ մոռացիլ յես քեզ...  
Ահա նստած ալստեղ, այս խոտաշունչ հեռվում,  
Մտաբերում, հիշում, — ու, տես — գրում եմ յես  
Քեզ հանգավոր նամակ: — Այս ամիսը,  
Հյուսիսային այս ցուրտ, զժկամ հեռուներում  
Յեռում ե կյանք մի ալլ, անորինակ ու նոր: —  
Միայն նկան ե, վոր իր դարավոր հունով  
Քշում ե ջուրն իր գորշ դեպի անհայտ ամիս,  
Այս ծանրանիստ նկան՝ անեղրական ու վեհ:

Այս քաղաքում, ուր ցոփ արքաներ են ապրել,  
Ուր շաշել ե մարակը ստրուկների վզին,  
Վորպես վերին պարզե, — ուր հյուսիսի  
Մառախուղի նման այս անտարբեր  
Իշխաններն են դարեր առևանգել, հարբել,  
Կախաղանների կանգնել հարյուրներով —  
Այս քաղաքում հիմա յեռում ե կյանք մի նոր,  
Զարմանալի մի կյանք: — Ալստեղ հիմա  
Բանվորական զեմքեր դու կոեսնես միայն, —

Յերևանից մինչև ովկիանոսը Խաղաղ,  
 Ո, աշխարհում ամբողջ զժվար լինի մի այլ  
 Այսքան անխոնջ, զգաստ, խստաբարո քաղաք:—  
 Այստեղ զգաստ դեմքեր լոկ կռեսնես քո շուրջը,  
 Պարզ, հասարակ դեմքեր, դեմքեր, վոր լուրջ են,  
 Ինչպես տարիքը, հոգսը, ինչպես «վերին»  
 Իմպերատիվը սերունդների...

.....  
 Այս հասարակ մարդկանց բազմություններն ահա,  
 Վոր դեմքերի վրա ունեն պահած  
 Մի անխորտակ վճիռ,— այս մարդկանց յես  
 Տեսա գործի ժամին, տեսա հրկեզ  
 Հնոցների առաջ,—տեսա ինչպես  
 Գուրգուրանքով, սիրով, լրջությամբ խոր  
 Այդ ժխորում գործի, այդ պայքարում  
 Ընդեմ նյութի,—անդուլ, գիշեր ու գոր,  
 Ընդվզում են նրանք ու մաքառում:—  
 Ինձ հմայեց այդ տենդը:— Այդ պայքարում վսեմ  
 Ո, վճ թե մարդն եր լոկ խոփեր կոփում,  
 Այլ ներշնչում եր ե՛ն նյութը մի անհուն սեր  
 Աշխատանքում կոփվող նրանց վոգուն:  
 Տեսա հետո նրանց յես հանգստի ժամին,  
 Թաորոններում տեսա, միտինգներում,—  
 Յեվ ամենուր նրանց այդ լուրջ, այդ խստամիտ,  
 Այդ մաքառող վոգին եր խանդից լեռում:—  
 Յեվ ամենուր նրանց հայացքների միջից  
 Անխնջ, հոգսը դեմքին, հետապնդում եր ինձ  
 Այն ղեկավարը մեծ, խստաբարո,  
 Վոր մկանուտ մարդկանց բազմություններն այս հոծ  
 Մի առավոտ մղեց ղեպի զրոհ...

.....  
 Յեվ նայելով նրանց, աշխատանքի բոցում



Իրենց վոգին կոփող այլ մարդկանց—լես  
 Տեսա, վոր միտք ե մի ուղեղս սղոցում,  
 Ինձ անդադար կրծող մի միտք, թե մենք  
 Ունեցե՞լ ենք արդյոք մեր առօրյա գործում,  
 Մեր յերգերում, գրած զրքերում մեր,—  
 Ունեցե՞լ ենք արդյոք մեր խոհերի խորքում  
 Այս խստությունը խոր ու անչափ վեհ:  
 Մեր յերգերում, գրած մեր զրքերում բազում,  
 Մեր գործերում, թեպետ պոետական,  
 Մեր մտքերում՝ հաճախ թե մեղի, թե գունազուրկ,  
 Մեր հուլզերում—այնքան լիրիկական—  
 Մենք չե՞նք յեղել արդյոք զարմանալի անհոգ,  
 Զարմանալի անփույթ, հաճախ թեթե,—  
 Յեվ պահեր ենք վսեմ մենք ունեցել յեթե—  
 Դա չի՞ յեղել արդյոք պատահական արդյունք  
 Պատահական ժամի... Կոփե՞լ ենք մենք  
 Մեր խոր խոհերն արդյոք աշխատանքի բացում,  
 Կո՞ւն ենք խոսքը մեր, վորպես պողպատ,  
 Վոր նա տոկա, կիզվի, ու անդադար շողա  
 Սերունդների սրտում... Յեվ հնոցում  
 Այս որերի, վոր մեզ հրկիզում են անդուլ,  
 Հրո՞վ, հրո՞վ սրում մեր պիրկ վոգին—  
 Տքնե՞լ ենք մենք արդյոք աշխատանքով հանդուգն,  
 Վոր մեր գործի վրա ժանգ չչոքի...  
 Մտածե՞լ ենք արդյոք, վոր խոսքը—թուջն ե նույն՝  
 Դիմազրող, համառ,—և յեթե մենք  
 Զհրկիզենք նրան մեր խոհերի հունում,  
 Աշխատանքով անդուլ թե չձուլենք—  
 Նա կխամբի, հանգած, կանոսրանա,  
 Կփուխրանա, ինչպես մզլած պտուղ,—  
 Յեվ բշտիկներ կուռչեն, լցված ողով,  
 Այլ փչացած թուջի—այդ խոսքերի վրա...

Տրված է մեզ չերգի անեզրական շնորհք,  
 Տրված է թափ, թռիչք, մաքրի խոյանք ու թև—  
 Իսկ մենք սահում ենք դեռ, զարմանալի թեթև,  
 Այն փոշապատ, մաշված ուղիների հունով,  
 Վոր հունն է բութ մաքրի, արաֆարետի, սերտած  
 Յերկու խղճուկ հանգի, չերկու կռտած  
 Դատողության,—(թեկուզ հիմնականում  
 Դատողությունն այդ վեհ է, սակայն հաճախ  
 Բեկտում են նրան, փետրահանում  
 Ու կմախքը նրա խեղճուկըակ  
 Թրջում ճղճիմ, հիմար հիացմունքի թուքով։—  
 Այդպես կարող է լուկ ստորոկն հոգով  
 Անմտության, անշունչ հնչախաղի փոխել  
 Հանճարեղ խոհն անդամ։—Այդպես ահա  
 Արծիվներն թևերն են մարդիկ կտրում մեկ-մեկ  
 Յեղ վանդակում պահում նրանց կմախքը լուկ  
 Փետրահանած ու մերկ)։—  
 Հիմա խոհեր կան՝ այդ արծիվների նման։—  
 Ու պոետներ բազում, վորոնց համար  
 Հիմնականը փետրերն են—մի ամենի խանդով  
 Փետրաթափ են անում նրանց անդուլ։—  
 Այդ խոհերից վսեմը—աշխատանքն է գուցե.—  
 Կարգն նրանց յերգերը՝ աշխատանքին ձոնած,  
 Կարգն սրտով մաքուր,—և ինձ ասա հիմա՝  
 Աշխատել են նրանք յերբևիցե...  
 Գիտեն նրանք արդյոք, վոր խոսքը—թնջն է նույն,  
 Վոր պահանջում է ջանք ու քրտնաջան լարում,  
 Մաքսուման շունչ ջերմին, հոգնության տենդու թույն,  
 Պահանջում է խոնջենք . . . . .  
 . . . . .  
 . . . . .  
 Մենք շատ եյինք անփուլթ մեր հանճարի հանդեպ,



Մեր որերի, գրչի, մեր խոհերի բազում:—  
 Վայել է մեզ լինել անխնայություն, անպիտան,  
 Յեւ որերում վատնել մեզ տրված դանձր զուր,  
 Ինչպես վատնել է այն ճորտը լեզենդական:—  
 Մենք չերգեր ենք գրել:— Իմացել ենք, սակայն,  
 Վոր խոսքը, շեշտը մեր յուրաքանչյուր,  
 Բաժանվելով մտքից մեր, մեր խոհերից—  
 Դառնում է վոչ թե լոկ դատարկ հնչյուն,  
 Այլ բարձրացող, չինող սերունդների  
 Սրտին, մտքին, վոգուն ու անհանգիստ նետած  
 Մի դրոշակ, կամ սև նշավանքի նշան:—  
 Վոր խոսքը, չերգը մեր՝ մեր խոհերով նշած՝  
 Կամ կարող է լինել հուրհուր դրոշ,  
 Կամ անկումի ժամին մեր խոհերից պոկած  
 Վողորմելի մի լաթ, մի սև ծվեն, վորով  
 Ցանկացել ենք մենք մեր յեղեղությունը ծածկել,  
 Մերկությունը վոգու ու անճարակ մտքի,  
 Վորպեսզի սուր մի սև մեղ չծակե,  
 Վորպեսզի միտքը մեր չբարձրանա վոտքի:—  
 Վոր խոսքը—նյութն է նույն, վոր կոփում են սրանք,  
 Այս մկանուտ մարդիկ,—ու մեղանից  
 Պահանջում է նա սեր, ու տքնություն, ու ջանք,  
 Ու գերագույն լարում:— Յեւ մենք քանի  
 Չենք սովորել դեռ մեր յուրաքանչյուր բառին  
 Նախ սիրով այս վեհ, այս խստությամբ ազնիվ—  
 Դժվար թե խոսքը մեր հորիզոններ վառե  
 Յեւ բարձրացող, յեղեղ սերունդներին հասնի...

. . . . .  
 Հասել ենք մենք արդեն այն սահմանին, վորից  
 Սկսվում է մի նոր ու դժվարին վերելք:—  
 Սին տենչերի փոշին մեր խոհերից քերենք  
 Ու ճանապարհ ընկնենք, մեծ ճանապարհ, նորից:—

Յես տեսնում եմ հիմա տարիների հեռվում  
 Հորիզոններ՝ բազում փորձությունով հղի,  
 Հերոսութուն, պայքար, և աննահանջ ուղի,  
 Վոր մի անգամ ե լոկ մեզ աշխարհում տրվում։—  
 Ճանապարհին այս մեծ, այս վերելքին անհղ  
 Մենք չենք հոգնի չերբեք, չենք կորցնի ուղին,  
 Չկտրվենք չեթե սերունդների հողից,  
 Սերունդների աչքով թե մեր չերթին նայենք...

Հիմա խոհերն են այս իմ ճակատին նստել։—  
 Ինձ ալսպիսի խոհեր ներշնչեցին նրանք,  
 Այն խստադեմ մարդիկ, վոր կոփում են ալստեղ,  
 Այս ցրտաշունչ հեռվում, չտեսնելած մի կյանք։—  
 Այն մկանուտ մարդիկ, վոր պահանջկոտ են, լուրջ են,  
 Ինչպես այս գորշ Նևան, այս աղջամուղջը,  
 Ինչպես տարիքը, հոգսը, ինչպես «վերին»  
 Իմպերատրիվը սերունդների...



## Խ Ո Ղ

Սերը—անս նրա միակ մեղքը:  
Ո վ ի դ ի ո ս Ն ա զ ո ն

Շատ եր լեցուն հողվույս, ով տեր,  
բազմագեղուն այս շրջափյուն...

Մ ի ո ա ք Մ ե ծ ա ը ե ն ց

Յես մարդ եմ, պոետ ու քաղաքացի.  
Ապրում եմ ահա լենինյան դարում,  
Գրում եմ չերգեր, գնում եմ գործի,—  
Ապրում եմ այնպես, ինչպես աշխարհում  
Ապրել ե մարդը բազմաթիվ դարեր.  
Իմ յերականերում արյունն ե յեռում  
Յեվ սիրում եմ չես «աշխարհ ու արև»:—  
Իմ սրտում ունեմ յես անթիվ սերեր  
Ու ցանկութուններ, ու խոհեր բազում.—  
Յես ինձ հետ այսօր աշխարհ եմ բերել  
Հազար մտորում, հազար զգացում:—

Յեվ այնպես, ինչպես բոլոր դարերում  
Կապված ե չեղել մարդը իր դարին—  
Յես իմ մեջ այսօր տեսչերն եմ կրում  
Սեր ժամանակի անդուլ պայքարի:  
Յեվ ինչպես ճորտը շվայտ Հռոմում  
Պատրիկների հետ չի հստել ճաշի—  
Այնպես յես այսօր, լենինյան դարում,  
Չեմ կարող լինել բռնակալ դասի,  
Պատրիկներ չեմ... Հազար թեկերով  
Կապված եմ չես այս հսկա պայքարին—

Յեւկ մաքառումի այս ճանապարհին  
 Յես ամեն տանջանք տարել եմ սիրով:  
 Յես դարիս անեղ փորձության պահուն  
 Վնչ միայն հատու յերգեր եմ կռել,  
 Այլ մարտ եմ մղել կլանքի ու մահու,  
 Վորպես մի զինվոր: — Պատրաստ եմ կրել  
 Յես կրկին սվին, չերբ որերը գան.  
 Հազար թելերով քաշում ե ներկան  
 Ինձ հորձանուտը իր լուռ պայքարի: —  
 Իմ բոլոր, բոլոր նշարդերով, վոր կան,  
 Յես կապված եմ իմ վիթխարի դարին: —

Բայց չեմ մոռանում չես յերբեք, չերբեք,  
 Վոր տրված ե ինձ մարդկային մի սիրտ,  
 Տրված են սերեր, կարոտներ, կրքեր,  
 Յեւկ կա աշխարհում... մի «հիմար լուսին»: —  
 Վարդեր կան կյանքում, կրքեր կան անանց,  
 Կան գրքեր, գրքեր հազարաչքանի,  
 Մրդեր կան հասուն, մարդեր կան կանաչ —  
 Յեւկ չես աշխարհում ապրում եմ քանի,  
 Չեմ կարող սիրով, սրտով իմ անհագ,  
 Չգացմունքներիս հորձանքով բեղուն  
 Չսիրել կլանքի լիությունն անհաս,  
 Ամբողջութունը այս բազմաղեղուն...

Հազար հուլիներով հուզում ե ներկան  
 Ու փում իմ դեմ հուզումների բերք: —  
 — Վողջո՛ւյն քեզ, կարոտ, ու խոհ, ու պայքար,  
 Վողջո՛ւյն քեզ, կյանքի բազմաղեղու լերդ:  
 Պայծառ եմ նայում աշխարհին հիմա,  
 Իմաստություն ե իմ սրտին իջել:



Հնձի յեմ յեղել հնձվորի նման—  
 Յեզ վո՛չ մի ցողուն հեմ ուզում զիջել:  
 Չեմ ուզում լինել արճիճ ու յերկաթ,  
 Այլ, սիրտս սրբած վաղվա հավատով՝  
 Ընդունում եմ ինձ աշնպես, ինչպես կամ՝  
 Իմ վոգու ամբողջ տենդով ու տապով:

Յեզ դո՛ւ, գալիքի յերջանիկ ընկեր,  
 Համաշխարհային դու քաղաքացի.  
 Լսե՛մ ես՝ մարտիկ լինելուց բացի  
 Յես ել քեզ նման մի մարդ եմ յեղել:  
 Յես ել քեզ նման ունեցել եմ բոլոր  
 Կարոտներ, կրքեր ու զգացմունքներ,  
 Տքնել եմ, հոգնել, պայքարել անքուն,  
 Թափել խնդուժյան, ցավի արցունքներ—  
 Սիրել եմ, սիրվել, ատել ու ներել,  
 Ընկել եմ հաճախ, բարձրացել ելի—  
 Յեզ բազմապիսի յերգեր եմ գրել՝  
 Խոհով, պայքարով ու կրքերով լի:—

Յեզ յերբ հուշ դառնա աչսորվա ներկան,  
 Ու դարը աչս մեծ փոխվի յերազի,  
 Յեզ դու, իմ հեռու, գալիք բարեկամ,  
 Կարդալու լինես իմ կյանքի մասին—  
 Իմացիր, վոր մեր որերի խորքում  
 Յես ել եմ յեղել կրքերին գերի—  
 Հասկացի՛ր սրտիս հույզերը հորդուն  
 Յեզ պայծառ նալիր անցած պատկերիս...

# ԵԼԵԳԻԱՆԵՐ

ՅԵՎ ԱՅԼ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ



## ԵՊԻԳԱԿԱՆ ԱՌԱՎՈՏ

Աղջամուղջը նայում ե աչքիս  
Այսոր խստաբարո, զգաստ:  
Առավոտը շուտով կբացվի,  
Յեվ սիրտս խնդուլթուն կզգա:  
Ինչ լսվ ե՝ բարձրանալ կանուխ  
Յեվ տեսնել, ճեղքելով մառախուղը,  
Թե վճնց ե ձգվելով բարձրանում  
Ծխնելույղի ծուխը:—  
Զգալ, վոր հոգսն ե արթնանում,  
Վոր ուղի պիտի դեռ գնաս,  
Մի ուղի, վոր վեր ե դեռ տանում,  
Մի ճանապարհ անհաս...

Դու ալգպես բացվեցիր գլխիս,  
Իմ վերջին հասունութուն...  
Դժվարին ե հիմա իմ ուղին—  
Յեվ գնում եմ ահա յես արթուն:  
Դիմացից հոգսն ե նայում—  
Հարկավոր ե յերկա՞ր մաքառել,  
Վոր գործը լինի մնացուն,  
Ինչպես միջոցելի արեւ:—  
Դիմացից սերունդներն են նայում,  
Սաստում են, վոր գնամ զգաստ.—  
Ինձ անտես մի ձեռք ե պահում  
Ճանապարհին իմ այս...

Սիրով եմ բաժանվում քեզանից,  
Իմ հախճառն անփութություն,  
Իմ անհոգ որե՛ր պատանի,  
Իմ շռայլ ջահելություն:  
Վողջունում եմ քեզ խնդությամբ  
Յեւ վո՛չ թե դառը ցավով,  
Իմ վերջի՛ն, վերջի՛ն այգաբաց,  
Իմ հալիքական առավոտ...

1929



## Մ Ո Ւ Ս Ա Յ Ի Ս

Ահա կրկի՛ն ինձ հետ ես, ահա կրկի՛ն,  
 Իմ բարեկամ, ընկեր, իմ զինակից:  
 Ունկնդիր եմ լինում ահա չերգիդ  
 Յես կարոտով, սիրով վաղվադակի:

Քո խոսքերում հիմա, քո մտերիմ  
 Զրույցներում և խոք, և չմարող—  
 Զարմանալի հստակ քո լերգերում  
 Թախիժ, թախիժ կա ջինջ, անափ կարոտ:—

Ինչքան եմ չես, գիտե՞ս, սիրում հիմա  
 Վոգի, վոգի սրբող, բայց չկրժող  
 Այդ ջինջ թախիժը քո խինդանման,  
 Այդ տխրութիւնը քո ստեղծագործող...

Հայացքներում պահած պայծառ թախիժ՝  
 Այդպես ճամփորդն ե լոկ տխրում արի,  
 Այն հոգնաջան ճամփորդը, վոր կատարից  
 Յետ ե նալում՝ անցած ճանապարհին:—

Այդ լերը ե նա անցել այդքան ուղի,  
 Յեւ որը վո՞նց դարձավ արդեն կեսոր...  
 Բայց չի փոխվում այդ վիշտը մառախուղի,  
 Այլ քրտինք ե դառնում՝ մաքրող ու զով:—

Յե՛վ սրբելով քրտինքն ի՛ր ճակատից՝  
Նա բարձրանում և Վեր, քալում կրկին,  
Բայց աչքերում մնում և արդեն թախիժ  
Յե՛վ կարոտ և ձուլվում նրա յերգին...

Մենք դեռ յերկա՛ր պիտի քեզ հետ գնանք,  
Ի՛մ բարեկամ, ընկեր, ի՛մ զինակից։—  
Ո, թո՛ղ թախիժը այդ պալձա՛ռ մնա  
Ու չցնդի յերբեք քո ճակատից։—

1929



## ԱՅՐԱԾ ՅԵՐԳԵՐ

Когда для смертного умолкнет шумный день  
И на немые стогны града...

А. Пушкин

Յերբ յերեկոն իջավ, վորպես հոգնած ճամփորդ,  
Յեվ փոշապատ նստեց տանիքների վրա—  
Յես սենյակս մտա իմ խոհարի ճամփով  
Յեվ հանեցի լերգերըս մի յերեկո գրած:  
Յես հանեցի լերգերըս ու կարդացի կրկին  
Պատմություններ, հուշեր մի ավերված հոգու,  
Յեվ խորշեցի չես ինքըս իմ հուսահատ լերգից,  
Յեվ ամոթի թախիծն եր իմ ճակատին չոքում—  
Յերբ տողերի միջից իմ լերգերի, իմ այդ  
Մի յերեկո գրած նվագների տակից  
Հառնեց հանկարծ, նայեց, ու ժպիտով ժլատ  
Ինձ վողջունեց նազով արդեն մեռած մի կին:  
Ու տողերիս միջից ինձ պարզեցին յերկու  
Նախատինքի սրեր յերկու աչքեր մեռած,  
Հետո սրեց ճակատըս նա իր նրբին ձեռքով,  
Յեվ մի հանգիստ իջավ իմ աչքերի վրա:  
Նա ինձ ասաց, այդ կինը, իմ տողերի միջից.  
«—Արիացիր, ընկեր իմ, ամրապնդվի՛ր վողջով,  
Մաքրի՛ր հոգնած քո սիրտը կարոտներից չնչին,  
Վոր վերանա խավարը քո հուշերին չոքով:—  
Թե հիշատակն իմ թանգ ե գեռ քո սրտին հիմա,  
Թե ուզում ես, վոր հուշըս չխավարի քո մեջ—  
Կրի՛ր պայծառ անունըդ մարտիրոսի նման,  
Յեղեր վողջով անդուլ դու, ու մաքառող, ու մեծ...»

Ո, հարազատ ընկեր իմ, իմ բարեկամ, իմ քույր,  
Անվերադարձ անցած հերոսական իմ կին,—  
Ահա կրկին արև ե իմ խավարած հոգում  
Յեվ կենսատու ժպիտ ե իմ տարամերժ դեմքին։—  
Յերբ դադարեց քո ձայնը այն յերեկո—հանգիստ  
Յես շոյեցի ճակատըս ու վառեցի կրակ,  
Յեվ հանձնելով իմ կյանքը հերոսական կամքիդ՝  
Յես այրեցի յերգերըս մի յերեկո գրած...

. . . . .



## ՈՎԿԻԱՆԻ ՅԵՐԳԸ

Յերգիր, պոետ, յերգիր, յերգիր յերգը քամու,  
 Յերգիր յերգը սիրո ու պայքարի,  
 Վորպես մրրիկ՝ յերգիր, յերգիր, վորպես սամուս,—  
 Յեվ քո սրտում աչք յերգը թող չմարի...

Յես հիշում եմ ովկյանը փոթորկի ժամին.—  
 Որորելով կրծքին անհուն ջրեր՝  
 Վորտում եր անդունդը— և անոելի քամին  
 Մռնչալով յերգում եր մի վայրի յերգ:  
 Նրա յերգում հնչում եր մի անսահման թախիծ,  
 Մի վիթխարի վոգու անափ կարոտ,  
 Վոր ովկիանի հախուռն մթնշաղից  
 Խելագարված՝ կանչում եր անհուն սիրով:  
 Խելակորույս՝ կանչում եր անծայրածիր մի սիրտ,  
 Մռնչալով կանչում իր սիրունուն,  
 Վոր յերգելով փախչում եր փոթորկի միջից  
 Յեվ թնդալով թռչում անծայր հեռուն:—  
 Յեվ հոգմերի միջից շառաչելով փախչող  
 Իր սիրունուն վսեմ չհասնելով յերբեք—  
 Այդ ամենի քամին, զարմանալի թախժոտ՝  
 Հեռուներում յերգում եր հաշթական յերգ...  
 Դա ամենի պայքար եր ջրերի ու քամու,  
 Յերկու իրար խանդող թշնամու սեր,—  
 Անհանգչելի սիրո մի վիթխարի սամուս,  
 Վոր տալիս եր քամուն պայքարի յերգ:  
 Դա հաղթական մի յերգ եր անեղրական կրքի,  
 Հերոսական մի յերգ անափ սիրո,—  
 Յեվ հանձնըված սիրո այդ հաղթական յերգին—  
 Այդ խոլ քամին թռչում եր գեպի դրոշ...

Յերգիր, պոետ, յերգիր, յերգիր յերգը քամու,  
 Յերգիր չերգը սիրո ու պայքարի,  
 Ինչպես մըրբիկ՝ յերգիր, յերգիր, ինչպես սամոււ,—  
 Յեւ Քո սրտում ալդ յերգը թող չմարի։—

Այն կատաղի հողմի մթնշաղի միջից  
 Շառաչելով կանչող այն քամու պես—  
 Քեզ հրկիզեց կլանքում անեղրությամբ վերջին  
 Մի անսահման կարոտ, մի անափ սեր։  
 Նա քեզ ցնցեց, այդ սերը, ինչպես շաշող քամի՜ն  
 Ալիքներն եր ցնցում իր խոլ թափով,  
 Անցավ սրտից նա քո ալս պայքարի ժամին,  
 Վորպես լերթի չելած ցասման թափոր։  
 Նա վորպես շանթ՝ պայթեց քո խոհերի վրա,  
 Վորպես կալծակ՝ շաչեց հողմաշառաչ—  
 Յեւ լեռնացան խոհերդ ովկիանի նման,  
 Յեւ վորոտաց քո սերը հողմահալած...

Յերգիր, պոետ, յերգիր, յերգիր յերգը քամու,  
 Յերգիր չերգը սիրո ու պայքարի,  
 Ինչպես մըրբիկ՝ յերգիր, յերգիր, ինչպես սամոււ—  
 Յեւ Քո սրտում ալդ յերգը թող չմարի։—

Այս անսահման սիրո անհանգչելի բողբոլ,  
 Այս պայքարում ահեղ, ալս մարտում խոլ—  
 Թող կարծրանան վոգիդ, վորպես պողպատ դաշույն,  
 Թող շողշողան, վորպես հանճարեղ խոհ։  
 Քո մեջ չեան թող նա, ինչպես անմար լեռանդ,  
 Ինչպես վսեմ մի խանդ՝ թող բորբոքի,—



Յեվ կլինես դու մեծ, և կլինի անպարտ  
Այս պայքարում կոփված քո խող վոզին:  
Քո հույզերի, քո խոր կարոտների խորքից  
Թող վորոտա այդ չերգը անափ սիրո—  
Յեվ, ունկնդիր նրա այդ հաղթական չերգին՝  
Թող քո վոզին թռչի դեպի գրոհ:—

Յերգիր, պոետ, չերգիր, յերգիր յերգը քամու,  
Յերգիր յերգը սիրո ու պայքարի,  
Ինչպես մրրիկ՝ չերգիր, չերգիր, ինչպես սամուլ,—  
Յեվ քո սրտում այդ յերգը թող չմարի'...

## ՄԵՌԱԾ ՊՈՆԵՏԻՆ

Նրանք ասում են, վոր դու անցել  
 Ու հնացել ես ու հեռացել,  
 Վոր լքել են քեզ ու մոռացել  
 Որերում այս խենթ ու դարձդարձիկ.  
 Բայց տես — կանչում ե անա մի ձեռ  
 Յեվ մի սիրտ, վոր քեզ սիրում ե դեռ.  
 — Վերադարձիր, ո, վերադարձիր...

— Վերադարձիր, ո, մենք քեզ կտանք  
 Թե սեր, թե հուրեր, թե խնդուլթյուն.  
 Ինչպես սիրած մի թափառական  
 Դու կրկին, կրկին կմտնես տուն...  
 Կգզվի դեմքիդ քամի մի զով,  
 Որերի շունչը, արդեն հնչե՛ղ,  
 Կլցնի հոգիդ անհուն հուլզով —  
 Ու նոր, նոր յերգեր կներշնչես...  
 — Վերադարձիր, ո, վերադարձիր...

— Այն ճանապարհով, վորով մի որ  
 Անցար սրտաբեկ ու գնացիր —  
 Անցան թափորներ արևովոր  
 Ու նոր բյուրավոր դռներ բացին...  
 Այն յերկրում, ուր դու մի որ լացիր  
 Ու մորմոքացիր աչք սև բոցում —  
 Ահա զարուհներ արևածին  
 Ու շոինդ, ու վառք, ու կառուցում...  
 — Վերադարձիր, ո, վերադարձիր...



## ՅԵՐԿՈՒ ՍՈՆԵՏ ԱՐՓԻԿԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ

Блажен, кто посетил сей мир  
В его минуты роковые.

Ф. Тютчев

## I

Իմ բարեկամ, իմ սեր, հերոսական ընկեր,  
Դու ապրեցիր, անցար և ել չկաս հիմա,  
Սակայն դեռ կյանքը կա և չի դարձել ամա,  
Յեվ վնչ մի աստղ վերից դեռ ներքև չի ընկել:

Ահա կրկին իմ դեմ ծաղիկներ ու կյանքեր  
Քո դարունքին բացված ծաղիկների նման,  
Կրկին ճիգեր անդուլ, անորինակ ջանքեր՝  
Մարդկային կյանքը մեր կառուցելու համար: —

Մշտահուլով, անսինջ, հավերժորեն հոսուն,  
Ովկիանի անխոնջ ալիքների պես վեհ՝  
Աղմկում ե ան հուզումների լեզուն: —

Յեվ ինձ տալիս ե թափ ու պայքարի թևեր  
Այս առուրյան կրկին, վոր յեռանդից չեռում  
Ու մղում ե դեպի անեղբալան հեռուն: —

Մենք ապրեցինք քեզ հետ մի վիթխարի դարում,  
 Վոր բյուրավոր մարդկանց խանդաղանքով ահա  
 Բարձրացրել ե, վորպես հաղթանակի վահան,  
 Մի՞ վիթխարի մարդու այդանման անուն:—

Մեր սրտերում անդուռ մի ափսոսանք պահած՝  
 Մի որ ճամփա դրինք նրա դագաղը մենք,—  
 Յեվ քարացել եյին, ինչպես ռազմի պահակ,  
 Ճանապարհին՝ անթիվ բազմություններ:—

Դա թաղում չեր, ընկեր, այլ շառաչուն մի ալգ,  
 Վոր բացվում եր այս հին մոլորակի վրա,—  
 Յեվ վողջունում եյինք մենք ալգաբացը այդ:—

Յեվ հառնելով՝ արդեն կերպարանքը նրա  
 Հուրհուրում եր գալիք հրդեհների հրով՝  
 Արնանման, ինչպես հաղթանակի դրոշ...



## ՄԱՀՎԱՆ ՔԱՅԼԵՐԳ

(Հերոսական)

ԼԵՆԻՆԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ

Վոչ փող զարկինք...

Մ. Պ ե շ ի կ թ ա շ լ յ ա ն

Մենք փող զարկինք և արձագանքն ահալոր  
 Յերկրից չերկիր վորոտաձայն շառաչեց,  
 Յեվ սրտերում միլիոնավոր, բյուրավոր  
 Ըմբոստուխներն ահագնացալ ու աճեց:

Զոհաններում, խրճիթներում, հանքերում,  
 Ուր տառապած մարդն և հարթում իր ուղին—  
 Վոտքի լեւան ահագանդի զանգերով  
 Գնդերն անդուլ գործարանի ու հողի:

Յեվ վոտնաձայնը գնդերի ընթացող  
 Յեվ շառաչուենը գնդերի մահահոտ—  
 Խրճիթներում հնչեց, վորպես մարտակոչ,  
 Պալատներում պայթեց, իբրև մահվան բռն:

Յեվ թափորի յեւած բոլոր գնդերի,  
 Բոլոր ըմբոստ բանակների առաջում—  
 Արդեն ննջած առաջնորդի պանծալի,  
 Անձեռագործ դիակառքն եր շառաչում...

Յերթը ձգվեց հերոսական, փառավոր,  
 Յեվ կայծակներ շոնդալով շողացին,  
 Յեվ դրոշներ հազարավոր, բյուրավոր  
 Նրա վերև արնանման դողացին:

Յեվ լուռ ննջած Առաջնորդի դագաղի՝  
 Յերթին չեւած բազմութիւններն այդ անահ  
 Յերդում տվին պայքարելու կատաղի —  
 Մինչև վերջին, մինչև վերջին հաղթանակ...

Մենք փող զարկինք և արձագանքն ահավոր  
 Յերկրից-լերկեր վորոտաձայն շառաչեց,  
 Յեվ սրտերում միլիոնավոր, բյուրավոր  
 Զմբոստութիւնն ահագնացավ ու աճեց:



## ԶՄԵՌԱՅԻՆ ՊԱԼԱՏԻ ՆԵՐՔՆԱՀԱՐԿՈՒՄ

Այս սենյակներում գիշեր մի մթին,  
 Յերբ դուրսը բուքն է շաշել հիստերիկ—  
 Մի պորփյուրակիր արքա-արլեկին  
 Հարցաքննել է դեկաբրիստներին:  
 Սառը ժպիտով, բեխերը սրած,  
 Սեղմել է նրանց մատները դողդոջ—  
 Յեվ նրա կապույտ աչքերից նրանց  
 Նայել է մի պահ բախտը անհողդողդ:  
 Ծիշտ նույն ժպիտով, վորով նա հաճախ  
 Սիրել է նայել սիրուհու զիստին—  
 Բարակ ձեռքերը իր կրծքին խաչած՝  
 Հրավիրել է Պեստեիին նստի:  
 Կապույտ աչքերը հառելով սրին,  
 Սրտում զսպելով խոր մի ան թեպետ՝  
 Չափազանց ինտիմ, քաղաքավարի  
 Զրույց է արել Ռիլեկի հետ:  
 Կանչել է մեկ-մեկ, խոսել է ալսպես,  
 «Բացել» է անգամ իր սիրտը վումանց,  
 Փորձել է անգամ վեհաթյամբ ազդել՝  
 Մի հեքիաթային արքայի նման...  
 Աչքերում պահած ամենի հուրեր՝  
 Որհնել է նրանց ժպիտով խաղաղ—  
 Յեվ ճանապարհ է ալստեղից դրել  
 Դեպի բանտ, Սիրիր, դեպի կախաղան:

1929. X

Լենինգրադ

ԵՊԻԲԱԿԱՆ ՓՐԱԳՄԵՆՏՆԵՐ



## ՀԱՏՎԱԾՆԵՐ ԶԳՐՎԱԾ ՊՈԵՄԻՑ

ՊՐՈԼՈԳ (ՅԵՐԿՐՈՐԴ ՎԱՐԻԱՆՏ)

Լեֆյան թմբուկը թողած մի կողմ,  
Հատվող տողերը նետելով դեն,  
Կրկին խրթին մի ու խոր դողով  
Առնում հմ յամբ չես ու քողադոտ,  
Վոր մեր պայքարը քնարերգեմ:—  
Ինչքան ջրեր են արդեն հոսել  
Այն թեժ որերից, յերբ ամենուր  
Տեսնում եր մարդը միայն սուսեր,  
Շողշող սուսեր ու շողշողուն հոսեր:  
Յերբ վորոտներին ընտելացած  
Լսում եր մարդը միայն թնդուն,  
Յեվ յուրաքանչյուր զրույցի ձայն  
Թե ավելորդ եր թվում, թե թույլ:  
Յերբ յերգը պիտի լիներ շառաչ  
Յեվ պոետը լուկ պիտի կանչեր,—  
Հիմա փոխվել է մեր առօրյան,  
Յեվ ինքս, ինքս — արդեն այն չեմ...

Այն չեմ այլես, այն, չես ել,—  
Արդեն փոխվել ես և դո՛ւ, քնար,  
Յեվ առավոտը քո վոսկեվառ,  
Քո առավոտը չերազասեր—  
Արդեն անցել ես: Մեր դեմ հիմա  
Արդեն փռվում է հորիզոն գորշ:  
Յեվ թախիծով եմ չես ակամա  
Նայում իմ շուրջը:— Սակայն սիրով,

Սիրով եմ ահա չես վողջուհում  
Այս հեռաստանը, բացված մեր դեմ,  
Յեւ խնդությամբ եմ չես ընդունում  
Կյանքիս կեսորը չերկաթադեմ:—  
Հիմա նայում եմ ահա չես չես,  
Չափում ուղին քո արդեն անցած,—  
Ահա յերգերը քո սեթևեթ  
Ու պոեմները արծաթաձայն...  
Ինչքան, ինչքան են նրանք, գիտես.—  
Շնորհակալ եմ չես քեզանից.  
Թեկուզ յեղել ես թեթևամիտ,  
Բայց աշխատել ես... Թե մեղանից  
Միշտ ափելին են մարդիկ ուղել—  
Նշանակում ե՛ր դու ել, չես ել  
Դեռ թերացել ենք յերևի քիչ,  
Յեւ դեռ չենք տվել կյանքում մենք այն,  
Ինչ կարող եյինք գուցե մենք տալ...

Հիմա դիմում եմ չես քեզ, քնար,  
Քո նվագուն ու ջերմին շնչին,  
Յեւ ցանկանում եմ, վոր հուրհուրաս  
Յեւ չերգդ, չերգդ— թափով հնչի:  
Ո, տուր չերգին իմ վսեմ հուզում,  
Թող նվագներս հնչեն անտշ,  
Վոր աղջկաները թախծեն նազով,  
Յեւ հերոսները հերոսանան...  
Գրկիր չերգով քո, չերգիր հիմա  
Դարիս գործերը ցնցող ու վեհ,  
Յեւ զրոշները արնանման,  
Վորոնց կապված ես դու հավիտյան  
Յեւ վորոնց ներքո պիտի մեռնես...

. . . . .  
. . . . .



## ՀԱՏՎԱԾՆԵՐ ԱՌԱՋԻՆ ԳԼԽԻՑ

. . . . .  
 . . . . .  
 Փողոցը չեռ ե ու շփոթ ե.  
 Աղմուկ ե. մեկն ե մալխի.  
 Աշխուժ՝ զնգում ե առավոտը—  
 Յեվ մեր յերթի հետ միասին  
 Հոսում ե հուլսը, խնդութչունը,  
 Թնդում ե յերգը քարձրաշառաչ,—  
 Ու, սարսափած, Դաշնակցությունը  
 Նահանջում ե մեր յերթի առաջ...

. . . . .  
 . . . . .  
 Խռիվ՝ լցրել են փողոցները  
 Գաղթականները, վանեցիք,  
 Յեվ աղմկում են վարը, վերը  
 Խմբապետները տեղացի—  
 Դաշնակ տղերքը, հին ջոջերը,  
 Միսիստրները ու պոչերը  
 Միսիստրները—զանազան  
 Մաուզերիստներ, ոֆիցերներ,  
 Վորոնք պատրաստ են «պատվով մեռնել»,  
 Միա՛յն թե...ֆրոնտը չաեսած:  
 Նրանք կանգնած են խռը, խուռը,  
 Պարլամենտի մոտ ու հեռուն,  
 Վիճում են բուռն ու հախուռն,  
 Ու աղմկում են, ու լեռում...

Յեվ ճեղքելով այդ խառնիխուռը  
 Մարդկանց ամբոխը—ահա վերից  
 Դալիս ե չերթը բանվորների...

Նրանց շարքերը ամրակուռ են,  
 Նրանց ընթացքը—կարգապահ,  
 Դա ընթանում է վեհը, նորը,  
 Դա ընթանում է—ապագան...

Կարմիր ծփում են դրոշները,  
 Հուրհուրատում են—ու բոլորին  
 Նրանք նետում են, ավետում են՝  
 «Իշխանությունը խորհուրդներին»։—  
 Հոսում է յերթը խիտ ու թանձր,  
 Անցնում են՝ ծանր դոփելով,  
 Ահա հնչեց Ինտերնացիոնալը,  
 Թնդաց հանդուգն ու խրոխտ,—  
 Յեվ բանվորները դեպոյի  
 Ավտոմոբիլում ապրանքատար  
 Հսկա մուրճերը խփելով  
 Յեվ բորբոք քուրան պահելով վառ՝  
 Ահա չերգում են ու առույգ են,—  
 Այդպես՝ յերթում մեր ընդհանուր՝  
 Հակառը բարձր ու հանդուգն՝  
 Մեծ Աշխատանքն է ընթանում...

Գալիս է յերթը ու կանգնում է  
 Ահա զիմացը պարլամենտի—  
 Յեվ զինվորները մոտենում են  
 Ու միանում են ահա յերթին.—  
 Յերթի շարքերը խտանում են,  
 Դառնում է յերթը մի բանակ,—  
 Յեվ դրոշները խոստանում են  
 Անդուլ կռիվ ու հաղթանակ...

Հանկարծ ծփում են զլուխները,  
 Անցնում է թանձր մի շշուկ—



Յեվ սևեղում էն հայացքները  
 Ղերձ պատշգամբին... Յեվ անշուք,  
 Գլխին՝ գորշ փափախ, հագին խակի  
 շապիկ, լայն կուրծքը ցցած առաջ,  
 Սեղմած բռունցքը իր ահագին,  
 Կապույտ հայացքը հեռուն հառած—  
 Ահա յեղնում է Ալլահվերդյանը  
 Յեվ պատշգամբից պարլամենտի  
 Խորխտ՝ հնչում է նրա ձայնը...  
 Նա խոսում է թունդ, սակայն հանգիստ։—  
 Վոգեղորված է.— կապույտ աչքերը  
 Թափում են շանթ ու համոզում,  
 Նրա ձեռքը անվեհեր են,  
 Նա բորբոքում է ու հուզում...

. . . . .  
 . . . . .

#### ՀԱՏՎԱԾՆԵՐ ՅԵՐԿՐՈՐԴ ԳԼԽԻՑ

Հիմա որեր են սրանք անցած...

. . . . .

Վորպես տեսիլ մի, մի դառանցանք,  
 Վոր խուլ զրկում է հոգին ահով՝  
 Կրկին բացվում են իմ դեմ ահա  
 Այն տարիները անապահով։—  
 Վորքան ուզում եմ, վոր չխոսեմ,  
 Վորքան ուզում եմ, վոր քիչ տեսի՝  
 Վորպես չերազ մի, ծանր ու սև,  
 Ահա չերկիրը—20 թվին։—

Փչում է մի թեն, խոնավ քամի։  
 Բամին բերում է սարսափ ու մահ։

Ահաբեկված ե լերկիլւն ամա՛  
 Կոխել ե մութը ու թշնամին:  
 Ու զլորվում ե, վորպես անիվ,  
 Դեպի անդունդը մեր բախտը՝ հոլ...  
 Վոսոխն առել ե Ալեքսովը  
 Ու մոտենում ե Յերեանին...  
 Ինչքան ջանել կա ու պատանի,  
 Ինչքան վոր անձ կա՝ զենքի կարող—  
 Արդեն քշված են դեպի Ֆրոնտ.—  
 «Դաշնակցությունը ել ի՞նչ անի...»  
 Դիւ մայիսին եր՝ սրով, հրով,  
 Պոկոտելով աչն «կարմիր հունձքը» —  
 Դաշնակցությունը «սեղմեց բռունցքը» —  
 Յեւ լերկրի տերը դարձավ Բյուրոն:

Տիրապետում եր Բյուրոն արդեն  
 Յերկրում ամբողջ չորս, թե հինգ ամիս—  
 Իսկ լերկրի շուրջը, ներսը, դուրսը  
 Միշտ թշնամին եր ու թշնամին:—  
 Յերկրում թալան եր, սով եր, ցուրտ եր,  
 Թեկուզ մեռնում եր ժողովուրդը,  
 Սակայն հո զո՞հ ելին «մերոնք» —  
 Դաշնակցությունը...ու Բյուրոն...

#### ՀԱՏՎԱԾ ՅԵՐՐՈՐԴ ԳԼԽԻՑ

. . . . .

Դիւ առավոտը ծագել եր նոր,  
 Յերբ արթնացանք մենք կովի չեռից:  
 Կոնդից թնդում եր մի թնդանոթ,  
 Իսկ գնդացիք՝ Բանաքեռից:  
 Յեւ Յերեանը, վորպես հնոց,  
 Վառվում եր դեմը ռազմի ծխում:



Այնտեղ կոիջն եր արդեն մխում,  
Այնտեղ շահնդ եր, ու ումը, ու բոց...

Յեվ տեսնում ելինք մենք բլուրից,  
Թե վոնց զորքերը մեր փոքրաթիվ  
Ահա անցնում են կայարանից  
Յեվ մոտենում են մեր ճակատին:  
Բայց կանգնած ելին կայարանում  
Դեռ գնացքները զրահապատ.  
Խուլ յեռուզեռ եր այնտեղ տիրում...  
Մի ջահել զինվոր, սարսափահար,  
Հայտնեց այն միտքը, վոր բոլորիս  
Արդեն հուզում եր, փորպես կասկած,—  
Յեվ մենք նայեցինք մեր զինկոմիտե,  
Վոր հասակ ուներ, ինչպես հսկա:—

Ասաց զինկոմը յերիտասարդ.—  
«Մերոնք թողնում են քաղաքն արդեն.  
Նրանք կարող են ճամփան կտրեն,  
Ժամանակին թե մենք չհասանք  
Յեվ գնացքները չաղատեցինք»:—  
Յեվ քեց թափով հանկարծ նա ձին:  
Բայց դեռ հաղիվ եր մի-յերկու քալլ  
Ձին առաջացել, չերը նա թափով  
Չսպեց կատաղած ձիու թափը  
Յեվ ասաց ձայնով մի անալլայլ.—  
«Դուք սպասեցեք այստեղ, մինչև  
Յես վերադառնամ»:— Յեվ նա կրկին  
Չգեց սանձերը ու քեց ձին՝  
Մի տարրերինակ ժպիտ դեմքին...  
Ձին թռավ թեթե, ինչպես քամի,  
Ինչպես կայծակե մի չերիվար,—  
Մենք տեսնում ելինք, վոր թշնամին

Արդեն առել ե Յերևանը  
Յեզ մոտենում ե կայարանին։—

Մենք նայում եյինք մեր դիրքերից,  
Նա սլանում եր, թռչում առաջ,  
Յեզ, հայացքներս նրան հառած,  
Անձնատուր մթին մեր մտքերին՝  
Հետևում եյինք ձիու վազքին  
Մենք սրտատրոփ,—իսկ նա թեթև  
Թե հեռանում եր հետզհետե,  
Թե մոտենում եր կայարանին...

Բայց հզ եր, հզ եր արդյոք աստեղ.  
Դա մերձեք եյին, թե թշնամի՞ն,  
Վոր գնացքները գերել արդեն  
Յեզ սպասում եր հրամանի,  
Վոր առաջանա ե մեզ գերի...  
Մենք նայում եյինք մեր դիրքերից  
Մեր քաջ զինկոմիտին, վոր հեռում  
Փոքրիկ մի կետ եր արդեն թվում։—  
Մենք նայում եյինք սրտի տապով  
Յեզ չղիտելիք դեռ մենք, թե նա  
Այդքան անվրդով, այդքան ահա  
Դեպ փրկության ե թռչում թափով,  
Թե, պահած սրտում կսկիծ անհուն՝  
Դեպի կորուստ ե նա սլանում...

.....  
.....

Քիչ հետո, քայլով քառատրոփ,  
Նրա ձին արդեն թռչում եր չեռ,  
Նա մոտենում եր քառարշավ մեզ,



Յեվ լերը մոտեցավ—նա անխռով  
 «Այնտեղ մերոնք են»—ասաց զվարթ,  
 Շողշող աչքերով նայելով մեզ—  
 Յեվ մենք զգացինք, վոր այդ մարդը  
 Ունի սիրտ անահ ու անչափ մեծ...

. . . . .

ԼԻՐԻՔԱԿԱՆ ՇԵՂՈՒՄ (ԶՈՐՐՈՐԴ ԳԼԽԻՑ)

. . . . .

Յեվ ղեկավարը այն հանճարեղ,  
 Վորի հայացքը բոցեղենն էր,  
 Վորին ազգերը ու ցեղերը  
 Արդեն լեզենդ են դարձրել...

. . . . .

. . . . .

Հիշում եմ՝ որը լուսավոր էր,  
 Յերկինքը ջինջ ու անհատակ,  
 Ծովի պլանները ու որորը,  
 Գարնան թովչանքը խորը, խորը,  
 Ինչպես լերկինքը կապուտակ...  
 Ծովում ճախրում էր մի ջինջ ապրիլ,  
 Թնդացող գարնան անհուն հավատ,  
 Յեվ, նստած մի պարզ, փոքրիկ նավակ՝  
 Մենք գնում էինք դեպի Կապրի...

Մեր թիավարը մի հաղթանդամ  
 Իտալացի յեր՝ աչքերով սև,  
 Ուներ հուժկու կուրծք, կարող ուսեր,  
 Նայվածքը բորբ էր ու հաղթական:—  
 Նա նայում էր մեզ ժպիտով բաց,  
 Լսում բարբառը մեր անծանոթ,

Յեվ յերբ կանգ առանք մենք կզգուս մոտ՝  
 — Այստեղ ապրել եւ Լենինն, ասաց,—  
 Լենինը—լճիկ եր,—ասաց հետո  
 Ու ժպտաց հստակ աչքերով իր—  
 Յեվ յես հիշեցի մի անգամ յերկիր,  
 Յեվ մի անգամ պայծառ, արևոտ ուր,  
 Յերբ նստէի հավատով ու խանդով խոր,  
 Ասաց ինձ նույնը, նստէի սիրով լի,  
 Մի անգամ նավաստի՝ անուան Ալի...

. . . . .  
 . . . . .  
 Նրա հացացքը տեսնում եր պարզ  
 Գալիք որերը ու դարերը,  
 Նրա խոյանքը հանճարեղ եր,  
 Նրա թռիչքը—չտեսնված—  
 Նրան ծանոթ եր խիստը մանկան  
 Ու թվերի սառ ու գորշ լեզուն,  
 Կարող եր լինել բարձր այնքան,  
 Կարող եր լինել հեզնոզ ու սուր,—  
 Կարող եր մատի մի շարժումով  
 Մի ամբողջ, ամբողջ մի դասակարգ  
 Նա դատապարտել մահվան,—սակայն  
 Կարող եր նաև անհուն սիրով  
 Սիրել ծաղիկներ, վարդեր, չերգեր,  
 Ժիր մանուկներին քնքուշ գրկել,  
 Յեվ, տեսնելով մի բռնակ մուժիկ,  
 Պատվիրել, վեր տան... մի գույք կոշիկ...

. . . . .  
 . . . . .



## ԶՈՒԳՈՒՆԵ ՄԱՐԴԸ \*)

На берегу пустынных волн  
Стоял он, дум великих полн.—

А. Пушкин

Там, где сливаясь шумят,  
Обнявшись, будто две сестры,  
Струи Арагвы и Куры,  
Был монастырь.

М. Лермонтов

Այս ձորում ահա, անհողողող-վեհ,  
Կանգնած է Մարգը այդ շուգունե:—

Դիմացը— լեռն է սրագագաթ,  
Վորի այն խոժոռ գագաթին ցից  
Թառեւ է վանքը, վորպես արծիւ:  
Ներքեւ, վարը, ահա վարար  
Հոսում է գետը:— Նրա ափով,  
Վորպես մի հողե ժապավեն գորշ՝  
Բարակ ձգվում է ահա շոսսեն:—  
Քանի՜ դարեր է այստեղ հոսել  
Այսպես այս գետը, քչել հեռուն  
Պղտոր ջրերը իր վարարուն  
Յեւ իր ափերին ամալի-սև  
Լոկ խոժոռ ժայռեր այստեղ տեսել

\*) Լենինի արձանը Չագեսում:

Յեւ վ այդ ժայռերի գրկում կբաժ՝  
 Խարխուլ խուղեր լոկ:—Ուղիով այս,  
 Վորով թռչում ե ահա ոթոն,  
 Մի որ անցել ե, գուցե վտռով,  
 Մի դանդուր պոեա հյուսիսեցի...  
 Նրա հանգով ե, վոր հյուսեցի  
 Յես ել այս յերզս, նվիրած քեզ,  
 Ո, վիթխարի դու, ո, վե՛ն Զագես:—

Հիմա այս ձորում, անհողողդ-վե՛ն,  
 Կանգնած ե Մարդը այդ հուզունե:--

Հասակը բարձր ե:—Հպարտ կեցած,  
 Վորպես մի քարե վիթխարի սյուն՝  
 Անհուն հայացքը սեեռած ցած՝  
 Պարզել ե ձեռքը:—Ըմբոստ հոսում,  
 Խոսում ե գետը ներքեում սե  
 Ու շրթունքներից թափում փրփուր:—  
 Այդ գետը յե՞րբ ե արդյոք տեսել,  
 Վոր մի մարդկային մոգական ձեռք  
 Իր վե՛ն ընթացքը կասեցընէ:—  
 Առաջ անցնում եր այստեղից լուռ,  
 Վորպես մի արքա դանդաղաքայլ,  
 Յեւ անվրդով եր ու անալալ  
 Նրա ընթացքը:—Քանի՛ դարեր  
 Այդպես անցել ե նա ասերեր  
 Յեւ կամքով իր կուռ ու վիթխարի  
 Քանդել խութերը ճանապարհի  
 Յեւ իր ընթացքով արքայական  
 Սաստել ամբողջը:—Մի որ յեկան,  
 Լցրին ափերը մարդիկ ինչ-վո՛ր,  
 Նրանց ընթացքը խորհրդավոր,



Տարորինակ եր:— Ձեռքերին թուղթ,  
Առած հետները ցցեր, կացին՝  
Իր հին ափերը չափչփեցին:  
Հետո մի ըմբոստ, ժիր ժողովուրդ  
Բռնեց ափերը ու խլրտաց:—  
Իսկ գիշերները՝ վոսկեշղթա  
Ձգվում էր լույսը դեպի հեռուն  
Ու առկալծում էր իր ջրերում  
Նրանց վառ բուլլը:— Առավոտից  
Մինչև խավարը իջներ գետին՝  
Ներքեր, վարը, ձորամիջում  
Յեռում էր կյանքը ու շառաշում:  
Մի հակալական պողպատե ցուլ  
Փորում եր հողը:— Բառաչով ցուրտ  
Թռչում, փնչում էր յերկաթե ձին:  
Վորպես մի քարե պառաված ցին,  
Իր այն բարձունքից դարավոր-վեհ՝  
Դրքչում էր վանքը չարությամբ լի:—  
Յեվ այդ քրքիջը անլսելի—  
Չարագուշակ եր:— Սակայն անցան  
Որեր, նոր որեր, որեր ելի—  
Յեվ այդ քրքիջը դարձավ սարսափ:  
Իր կույր աչքերով մի որ տեսավ  
Ներքեր, վարը, նա հուն մի նոր,  
Յեվ այդ վիթխարի, քարե հոնով  
Հոսեց հին գետը:— Սակայն ինչո՞ւ,  
Ինչո՞ւ յե գետը ահեղ փնչում,  
Յեվ ինչո՞ւ նրա հորձանքի գեմ  
Կանգնեց պատնեհը այդ բետոնե,  
Յեվ գետը, գետը դարձավ խոնարհ...  
Հետո կրակներ ցլացին վառ,  
Կարծես լերկինք էր գետից յելել,

Ո, մի նոր յերկինք բյուրարեգալ...  
 Այդ արևներից վոսկեկրակ  
 Հետո ձգվեցին բարակ թելեր  
 Դեպի քաղաքը այն հեռավոր—  
 Յեվ սիրտը, սիրտը լցվեց ահով:—  
 Ներքեր—կյանքն է հիմա քրքջում.  
 Ո, յեթե դառնար հանկարծ թռչուն,  
 Մի յերկնասլաց թռչուն ջահել,  
 Կարող աչքերով շուրջը նայեր,  
 Պարզեր թևերը ու սլանար...  
 Բաց չդթալված է ժայռերին նա  
 Յեվ քար է ինքը ու սիրտը—քար:—  
 Նա գուցե ալստեղ մի քանի դար  
 Դեռ մնալու է այսպես չնչին,  
 Մինչև վոր մի ուր քամուց փչի  
 Յեվ դառնա զրույց ու հիշատակ:—  
 Յեվ նա աչքերով իր միզապատ  
 Նայում է շուրջը, նայում ներքե,  
 Ուր գետն է յերգում ահեղ յերգեր,  
 Յեվ ուր, կեցվածքով անսահման վեհ՝  
 Կանգնած է Մարդը այդ շուգունե...

Դա ռվ է, ի՞նչ է, ինչո՞ւ է նա  
 Ներքեում կեցել, վորպես պահակ,  
 Յեվ շուրջը, շուրջը նրա ահա  
 Յեռում է կյանքը բյուրարեգալ:—  
 Դա ռվ է, ի՞նչ է արդյոք խոկում,  
 Յեվ ի՞նչ հուլիներ են նրա հոգում,  
 Յեվ ի՞նչ մտքեր են արդյոք նստել  
 Նրա ճակատի խորշոփներին.  
 Նա ի՞նչ է ուզում այս ավերից  
 Յեվ ինչո՞ւ է նա յեկել այստեղ...



Մոռայլ ե վանքը:— Անհուն անից  
 Կքվել, թեքվել ե նա ավելի,  
 Յեվ, քարե սիրտը այդ անով լի՝  
 Նա լուռ նայում ե հեռուներին,  
 Նայում ե՝ աչքը անեղ մահի—  
 Յեվ լուռ ե շուրջը ու ամալի:—  
 Մոռայլ ե վանքը:— Կպած ժայռին,  
 Վորպես մահամերձ մի ցին վալրի՝  
 Շնչում ե ծանր, հազիվ հեռւմ:—  
 Անցնում ե կյանքը... Ու ներքևում,  
 Վորպես մի հսկա, անհողողող-վեհ՝  
 Կանդնած ե Մարդը այդ չուգունե...

## ՀՈԿՏ. 25- 26 1917

(Ֆրագմենտ)

Где над возвышенным крыльцом,  
С поднятой лапой, как живые,  
Стоят два льва сторожевые...

А. Пушкин

Յերկիրնքը գորշ հ։—Պղտոր Նեան  
Դանդաղ՝ խփում է իր ափերին  
Յեզ մառախուղը ծխանման  
Իջել է թանձր։—Պալատների  
Մութ ֆասադները մառախուղում  
Կարծես ճոճում է մի անտես ձեռք.  
Անծայրածիր մի, անսահման չերթ  
Տարուբերվում է քաղաքում հար.—  
Ամենուրեք, ո, ամենուրեք  
Յեռում է չերթը այդ անդադար։—

Յերկիրնքը գորշ հ։—Այնտեղ, հեռուն,  
Ուր գորշ Նեան է տարուբերում  
Իր լալն իրանը ալիք-ալիք—  
Նստել է ծանր ու անառիկ  
«Ավրորա» հավը։— Չմեռային  
Անթով պալատն է ահա այնտեղ,  
Վորպես մի զամփռ, իր դեմ նստել։—  
Աճում է ահը։— Սարսափն անդեմ  
Դառնում է ծանր ու դժնադեմ  
Ու թանձրանում է հետզհետե։—



Աճում ե ահը:—Չմեռային  
 Հին պալատից այս միջիչ ներքե,  
 Ուր առուածներն են այն ամենի,  
 Վորոնց պոետն ե այն մեծ չերգել  
 Յերգով իր բարձր,—այնտեղ ահա  
 Թնդանոթներ են զրված մեկին,  
 Յեվ հրացանը ձեռքին պահած,  
 Թնդանոթներից մեկի կողքին  
 Ահա կանգնած ե մի գունատ կին:  
 Յերիտասարդ ե:—Նրա դեմքին  
 Նստել ե ահը:—Նրա բարակ  
 Մատներն հաղիվ են պահում ստոած  
 Ու ծանր կոթը հրացանի:  
 Ճնդում ե ցուրտը:—Սոնավ քամին  
 Մինչև թոքերն ե նրա մտնում:  
 Յեվ նա նայում ե ու թշնամուն,  
 Վոր մոտենում ե—նա չի գտնում:—  
 Աճում ե ահը:—

Ինչո՞ւ չե նա,

Գունատ այս կինը, կանգնած այստեղ.  
 Ինչո՞ւ չե ահը այդպես նստել  
 Նրա նուրբ դեմքին ու աչքերին.  
 Այս անդառնալի ընկերներն  
 Այդ ռվ ե նրան դրել այստեղ:—  
 Աճում ե ահը:—

Թեկուզ անդին,

Իր կանգնած տեղից մի քիչ հեռու,  
 Ահա ցցված ե Ալեքսանդրի  
 Ծանոթ հասակը,—իբր սիրելու,  
 Իր մտերիմի, վորին այնքան  
 Սիրում ե ինքը, վոր որերով

Ահա կովում ե, վորպես հերոս  
 Բոլշեիկների «հորդայի» դեմ,—  
 Թեկուզ կանգնած ե ահա այնտեղ  
 Իր տրուբադուրը,—սակայն կրկին  
 Ճնշում ե ահը:—Հեռուներից  
 Անդեմ սարսափ ե մի արշավում,  
 Յեվ մառախուղը պալատներին  
 Դժկամությամբ ե արդեն նայում:—  
 Աճում ե ահը:—

Այս կինը, տես,  
 Վոր սրթսրթում ե ահից ալդպես,  
 Վորի պրոֆիլը նման ե հին  
 Մի հաղձապակե մեղալուծի—  
 Ահա այս կինը զինվոր ե մի  
 Այն ամազոնյան բատալյոնի,  
 Վոր հրացանը հիմա ձեռքին  
 Արհավիրքներից պիտի փրկի  
 Այս պալատները, ուր տարիներ  
 Զվարճացել ե կատարինեն...

Աճում ե ահը:— . . . . .  
 . . . . . Այնտեղ, հեռուն,  
 Այս առլուծներից մի փոքր անդին,  
 Ուր մառախուղն ե զանդաղ քերում  
 Ամհհի պատերը սենատի—  
 Այն անծալրածիր հրապարակում,  
 Ուր, կարծես հենց նոր լեռից պոկած,  
 Ընկել ե ծանր մի հսկա քար  
 Ու վերից իր ձեռն ե տարածում  
 Դեպի հեռուներն արքան աչն մեծ—  
 Այնտեղ ամբոխներ են խռնվել  
 Յեվ, սուր սվիններ կոշտ ձեռներին՝



Դժկամ՝ նայում են պալատներին:  
Աճում է ահը, ինչպես փորձանք:—  
Ո, դու, կարճդ ես հիմա չերգել  
Այս մառախուղը թե խոլ, թե վեհ,  
Այս լեռնացումը գահակործան...

Աճում է ահը: Մառախուղում  
Վերջին վարկյանն է արդեն զողում—  
Յեվ ծանրության տակ Պետրոս Մեծի  
Արդեն ձոճվում է պղնձյա ձին...

Աճում է ահը:—

Այնտեղ, հեռուն,  
Ուր զորշ նեան է տարուբերում  
Իր լալն իրանը ալիք-ալիք—  
Կանգնել է, ծանր ու անառիկ,  
Քարե այն տունը:—Այդտեղ առաջ  
Մի մենաստան է չեղել խաղաղ,  
Ու սովորել են հետո այդտեղ  
Այն նուրբ կույսերը սիրել, խանդել,  
Յերգել ոռմանսներ, պարել կադրիլ—  
Ինչ չերագել է ամեն պատրիկ  
Իր հոմանուհու, կնոջ համար...  
Գոռ ուղմավայր է այնտեղ հիմա:  
Նեղ սենյակներում, վարը, բակում,  
Այգում, փողոցում, հրապարակում  
Անդուլ վիտում են, հագած շինել,  
Մարդկային դժկամ բազմություններ:—  
Ու թնդանութներ, գնդացիներ,  
Ռումբաձիգ գնդեր կանգնած ահա—  
Այդտեղ իր բուլնն է հիմա դրել  
Մի չտեսնված, մի նոր բանակ:—  
Աճում է ահը:—

Վերը, աշնտեղ,  
 նեղ սենյակներից մեկում, հանդարտ  
 նստած է փոքր, աշխուժ մի մարդ:  
 Հասակը կարճ է:—Աչքերի մեջ  
 Աննկատելի ժպիտ կա մի.  
 Ամբողջ մարմինը միանգամից  
 Շրջում է նա, յերբ նայում է յետ:—  
 Նա աշխատում է խորասուզված:—  
 Մեկ-մեկ մարդիկ են մտնում դռնից,  
 Վորին հսկում են յերկու կարմիր  
 Զինվորներ՝ հագած զգեստներ պարզ:  
 Նա աշխատում է խորասուզված,  
 Ինչ-վոր թեզեր է գրում նա, յերբ  
 Հնչում է զանգը հեռախոսի:  
 Իր աթոռի հետ նա միասին  
 Շրջվում, առնում է փողը. անշարժ  
 Մի պահ լսում է. դեմքի վրա  
 Նստում է հոգսը:—Հետո հանկարծ  
 Կարծես ցնցում է մի ձեռք նրան.—  
 «Ավրորա... Ի՞նչ... Ե... չե՞ն հանձնրվում...  
 Արդեն ուզում եք... Ի՞նչ... կրակե՞լ...» —  
 Վայրկյանը դար է արդեն թվում:  
 Նա մտածում է: Ակնթարթ մի  
 Մնում է համր: —Հետո հանկարծ  
 Հպում է փողը շրթունքներին,  
 Ծնչում է ծանր—ու կամացուկ  
 Հրամայում է.—

«Կրակեցե՛ք»:

. . . . .  
 Աճում է անը:—



ԶԱՓԱԾՈՆ ՆՈՎԵԼԼՆԵՐ

## «Homo Sapiens»

### 1

Տասյերեք թվի ամառը, հունիսին,  
Նախիրյան քաղաքի մի փողոցով խաղաղ  
Անցնում եր, հոգսը յերեսին,  
Տասնըվեց տարեկան մի տղա:—  
Վտիտ եր: Միջահասակ: Ուսերը նեղ:  
Գանգուր մազեր ուներ, գունատ ճակատ:  
Հագին սև շապիկ սատինե՝  
Խուսացած, առնվազը չերեք ամառ հագած:  
Դեղին չերիզներով դպրոցական գլխարկը  
Գանգուր, խիտ մազերին նստել եր ձիգ:  
Նա գնում եր դանդաղ, քայլում եր գլխահակ,  
Անտարբեր շրջապատին, ինչպես ձի:  
Նա դուրս լեկավ տնից: Կեսոթ եր:  
Քիչ հետո հայրը չերեխ գալու չեր ճաշելու:  
Նա չեր սիրում հորը:  
Իսկ հոր համար տղան դարձել եր հանելուկ:  
Հայրը:— Հիշեց զայրացած:— Նա չերեկ,  
Յերբ ինքը կեսգիշերին վերադարձավ տուն—  
Գազազեց, ու համոզեց չերկար:— Հետո պալ-  
ման դրեց՝  
Կամ տուն չգալ ալլևս, կամ կրկին պատ-  
րաստվել քննության:  
Ուսը ցնցեց տղան մեքենայաբար,  
Հիշեց դպրոցը, հորը, մռայլ տեսուչին. —  
Ինքը կանգնած է գլխիկոթ նրանց առաջին՝  
Դեմքին ամոթ, փռշի ու արցունքների թափած...



Խորը հոգոց հանեց, հառաչեց —  
 Ու քալեիք ձգեց:— Յերկար:  
 Զգվում եր իր դեմ փողոցը: Գնում եր:  
 Ամառվա շափրանով ներկած՝  
 Հորանջում եր փողոցը քնում իր:  
 Փողոցը... Յերկու շաբաթ միհարկանի տներ՝  
 Դեղին, գորշ, վարդագույն, կրկին դեղին:  
 Իսկ մեջտեղում շոսսե:— Փոշոտ, նեղ,  
 Ինչպես գլուղական սալլուղի:—  
 Յերբեմն անցնում ելին մայթից մարդիկ  
 Դանդաղ, անցնում ելին ու մանում տուն:  
 Ու կրկին ամայանում եր մայթը:  
 Շոգ: Փոշի: Սաղաղութուն:—  
 Կամ մի տնից յերբեմն, մի պատուհանից  
 Դուրս եր նայում մի պահ մի կանացի գլուխ,  
 Կանչում եր ղիմացի հարեանին—  
 Ու կրկին փողոցը ննջում եր: Լուռ:  
 Տղան քալում եր դանդաղ, առանց նայելու  
 Իր շուրջը:— Վտաքերը մեքենայաբար  
 Տանում ելին նրան:— Ճանապարհը  
 Չունեն նրա համար հրապուրիչ բան:  
 Նա գնում եր աչգի:— Կոնստանկին  
 Նա տանում եր մի գիրք:— Չսարսափես  
 Ընթերցող:— Գրքի շապիկին  
 Գրված եր՝ «Homo Sapiens»:—

## 2

Նա կարգում եր յերկար, նստած ալեկում,  
 Այն հին կաղնու ներքեր, վորի բնին  
 Անցյալ տարի ամառը մի տաքգլուխ

Դանակով փորագրել եր՝ «Արփենիկ»:  
 Նա կարդում եր անհագ, լափելով  
 Եջերը, գլուխները:— Գրքի թերթերից  
 Մեկը, տխտանային, կարծես շանթ եր թափում  
 Յեվ ալրում իր հոգին, իր կրքերը:  
 Գլուխը վառվում եր: Մերտը  
 Թրթռում եր:— Ուզում եր թռչի դուրս, դուրս:—  
 Տազնապով դարձնում եր թերթերը  
 Ու կարդում, կարդում, կարդում:—  
 Չքացել եր աշխարքը:— Այգին  
 Դարձել եր անիրական: Այգին չկար:  
 Կար մի մարդ հանճարեղ, կար մի կին:  
 Կար մի կարոտ միայն:  
 Յեվ անարատ մի սիրտ կար: Յեվ մի ուղեղ՝  
 Դեռ անապակ, դեռ ջինջ, դեռ մաքուր:  
 Գավառցի պատանի կար մի խեղճ  
 Նայիրյան ալդ խեղճ քաղաքում:  
 Նա կարդում եր: Սուզվում եր անդարձ  
 Յնորքների հորձանքը:— Գրքի եջերից  
 Յերազվում եր նրան տխտանային մի մարդ,  
 Վորի հոգին, մտքերը, տենչերը  
 Վիթխարի լին, ամեն ինչ խորտակող,  
 Վորը բարձր ե իր բուրժ շրջապատից,  
 Ինչպես ճահճից— Ելբրուսը, — ե վարդապույն  
 Մի մշուշի նման նրա հոգում  
 Արդեն փովում եր մի անեղբրական կարոտ...  
 Նա կարդում եր անհագ— և գնում եր հանդուգն,  
 Արդեն ինքն ել ալդ «վեհ» ճանապարհով:—  
 Յեվ թվում եր նրան, թե իր գլխին  
 Շառաչում են շանթեր, — և իր սրտում  
 Հրդհներ ե վառում անիրական մի կին,  
 Մի հանճարեղ աղջիկ... Անհագ թերթում  
 Ու կարդում եր անվերջ, մինչև հոգնեց:



Զգաց՝ քաղցած ե քիչ, իսկ գրպանում...  
Ընդամենը ունեւր... չերկու կռակի:—

## 3

Յերեկո յեր արդեն, լերը նա, հոգնած,  
Դիրքը դրեց մի կողմ:— Շուրջը նայեց—  
ամալի եր ալլեյը:— Հանճարներին վայել  
Մի շարժումով շոյեց նա իր ճակատն հանկարծ—  
Յեվ քայլերը ուղղեց ալլեյից դուրս:  
Այնտեղ, այգու զիմացը, կար մի փոքրիկ խանութ,  
Վոր վաճառում եր հաց:— Կես ֆունտ գնեց  
Յեվ գրպանում պահած՝ վերադարձավ կրկին  
Նա ամալի ալլեյը:— Շուրջը նայեց—  
Չեր յերեւում վոչվոք:— Նա սպասեց մի քիչ  
Յեվ սկսեց ուտել զաղտագողի:— Մտքում  
Յերազվում եր դեռ նա, այն հանճարեղ գերմարդը:—  
Շուտով կիջնի գիշեր, այգի կգա նվարդը...  
Նա շտապով կերավ, վերջացրեց:— Հանկարծ  
Մի շարժումով կրկին իր ճակատը շոյեց—  
Յեվ վորոշեց, վոր ինքը դառնալու չի կլանքում...  
Մի հանճարեղ պոչեւ:—  
Նա վորոշեց հանկարծ, միանգամից,  
Յեվ սկսեց շրջել ալլեյներում խաղաղ,  
Հետո մտավ ակումբը, ուր մի քանի  
Ուսանողներ՝ հարբած՝ բիլլիարդ եյին խաղում:  
Չանձրանալով՝ դանդաղ նա այդտեղից  
Յերբ դուրս յեկավ կրկին մի քիչ հետո—  
արդեն այգին լցվել եր:— Դեմը նայեց—  
Անցնում եր այն աղջիկը ծառի մոտով,  
Իր լերազած աղջիկը, իր դիցուհին,  
Իր հանճարեղ նվարդը... Նա մոտեցավ,

Փորձեց գրույց անել հետը մի քիչ,  
Շլացնել նրան իր խոհերով պայծառ...  
Բայց աղջիկը նրան չչոչեց,  
Զվերցրեց անգամ նրա վարդը...

Այդ պատանին հետո դարձավ պոետ,  
Յեւ զրեց ալս նովեղլը, վոր դուք կարդաք...



## ԱՆԱԿՆԿԱԼ ՀԱՆԴԻՊՈՒՄ ՊԵՏՐՈՊԱՎԼՈՎՅԱՆ ԱՄՐՈՑՈՒՄ

Յես, անբարբառ մի մանուկ,  
Յերկու ձեռքս պարզեցի...

Միք՛ն ալբանացի

Սա Սինեգուրի կամերն ե, սա—Ֆիզների,  
Այստեղ նստել ե—Սաղոնովը Յեգոր,  
Կրապուտկինն ե նստել այս կամերում,  
Բաումանն ե նստել այստեղ մի որ։—  
Այսպես, շարան-շարան, ստվերներ հին,  
Հին անուններ—ալնքան հերոսական,  
Դեմքեր—և՛ պարզ, և՛ ջինջ, և՛ սիրելի—  
Ահա կանգնում են իմ մտքի առաջ։  
Սերունդներ են ամբողջ, մի վեհ բանակ,  
Շունգալով անցնող հաղթական լերթ,  
Հերոսության, փառքի մի ճանապարհ անհաս,  
Հիմա դարձած անցած որերի յերգ...

Իսկ այս բակում ահա, ուր հիմա մի  
Շենք կա կանգնած ուրիշ,—այստեղ ահա  
Այն բոստիոնն ե հին ու ամենի  
Ցցված լեղել առաջ, վորպես պահակ  
Արքաների փառքի ու ցոփության...  
Հյուսիսային այն ցուրտ ղեկտեմբերյան որից,  
Վոր արշալույսն լեղավ այս որերի,  
Տառապել են այստեղ բազմություններ ուրիշ,  
Բայց նսւնքան վեհ, անբիծ հերոսների։  
Իմ ուղեղի միջով հիմա նրանք  
Ահա անցնում են լուռ, խստաբարո,

Նարազանի հետքեր մարմինների վրա,  
 Բայց աչքերում վճիռ մի չմարող:  
 Մտաբերում եմ չես նրանց մեկ-մեկ,  
 Բիլեյներից մինչև պայծառատես  
 Այն մտածողը զեհ ու հանձարեղ,  
 Վորին Մարքսն է մի որ անվանել մեծ:  
 Այս քարերի վրա, այս պատերի,  
 Վորոնց նայել են աչք մարդիկ մի որ —  
 Հայացքների նրանց ու խոհերի  
 Անանց հետքերն եմ չես փնտռում սիրով:  
 Վաղուց արդեն թողել, հեռացել են նրանք,  
 Վորոնք ինձ հետ մտան բակն այս ահի, —  
 Անխոս նայում եմ չես այս պատերին մռալի,  
 Շուրջս մութն է արդեն ու ամայի:  
 Հրաժեշտ եմ տալիս արդեն նրանց,  
 Շուռ եմ դալիս արդեն, վոր գնամ յետ —  
 Յերբ իջնում ե հանկարծ ուսիս վրա,  
 Անակընկալ՝ իջնում ե մի ծանր ձեռք: —

Յետ եմ նայում, վերև... թեքված ուսիս՝  
 Մի մարդ՝ դեմքով հեռու, անիրական, —  
 Մտերմական ձայնով ասում ե ինձ.  
 — Ի ուր ինձ մտացել եք, բարեկամ...  
 Բարձրահասակ ե. ջղուտ. աչքերը սև.  
 Բակենբարդներ ունի, փոքրիկ մորոտ:  
 Յես վճրտեղ եմ նրան արգյոք տեսել.  
 Կյանքով արգյոք, տենդով, թե գրքերով:  
 Վշտանման ժպիտ մի աչքերում՝  
 Նայում ե նա, նայում՝ հայացքն հառած.  
 — Ի՞նչ ե, — ասում ե. — չեք մտաբերում  
 Տարիներում այն մութ իմ բարբառած



Շոնդալից յերգերն ըմբոստության մասին:—  
Մաքառելով անցա ուղին յես իմ,  
Պալքարելով այն սև բռնության դեմ,—  
Յեվ պարծանքով կասեմ, վոր բարեկամ եյի  
Յես Հերցենի, պոետ Ոգարեի հետ...»  
—Ա՛, —զարմանում եմ յես, ճանաչելով նրան,  
Պարզում թևերս, վոր նրան գրկեմ,—  
Նա վողջունում ե ինձ ու հեռանում արագ—  
Ամայի բակն ե լուկ լուում իմ դեմ...

1929. 18. X

Լենինգրադ

## ՄԵԾ ԱՌՈՐՅԱՆ

Գիշեր եր արդեն, չերբ վերադարձավ:—

Ճամփին, փողոցում, քամին սանձարձակ  
 Հանդում եր ցուրտ, փշում եր խոնավ  
 Յեվ մտնում մինչև վոսկրները:— Նա  
 Մրսել եր թեկուզ և սրթսրթում եր  
 Ինչպես թըջած հավ, — ուղեղը սակալն  
 Յեռում եր անսանձ խոհերի տապից:—  
 Իր ամբողջ կյանքում առաջին անգամ  
 Նա չնկատեց ցուրտը, չանիծեց  
 Աշխարհը, մարդկանց և իր բախտը բուխ  
 Ու անաջողակ:— Ուղեղում— մտքեր  
 Նոր ու անսովոր, մտքեր, վորոնք մեծ  
 Ու ճնշող էին, ու հրապուրիչ,  
 Ինչպես մի հեռու, հզոր, անծանոթ  
 Աշխարհից հնչող շոնդալից լերգ:—  
 Յեվ հիշում եր նա, նորից ու նորից,  
 Լեմբողջը... նրանց դեմքերը, նրա  
 Խոսքերը և՛ պարզ, և՛ զարմանալի,  
 Ինչպես մեքենան այն հրաշագործ,  
 Վոր դումարում և, հանում, բաժանում  
 Յեվ բազմապատկում: Այդպես, ճիշտ ալդպես  
 Զարմացավ նա, չերբ առաջին անգամ  
 Յուրյ ալին նրան հաշվող մեքենան:—  
 Այդ զարմանալի մեքենան:— Իր գորշ,  
 Իր միապաղաղ կյանքում, ուր չկար  
 Վնչ մի բան լուսեղ ու զարմանալի,  
 Վոր ամբողջովին մի շղթա չեր գորշ,  
 Փոքրիկ հոգսերի, — վոր տեղում եր լուկ,  
 Վորպես ոռճիկից-ոռճիկ ընթացող



Մի տաղտկալի լերթ, — իր կյանքում դա մի  
 Հրաշք եր՝ վսեմ ու անիրական։ —  
 Այդ զարմանալի մեքենան... Մի պահ,  
 Առաջին անգամ լերը նա դարձրեց  
 Այդ մեքենայի կոթը, — մի վայրկյան  
 Կաշկանդեց նրան անդրաշխարհային  
 Մի յերանություն։ — Մի վայրկյան նրան  
 Թվաց, թե ինքը մի գերերկրային  
 Հանճարի ուժով պոկվեց առօրյա  
 Իր անասող կյանքից — և թռավ դեպի  
 Հրաշքով լեցուն աշխարհ մի ուրիշ,  
 Դեպի հեռավոր աշխարհն այն, վերի  
 Փարթամ, դյուրեկան կենցաղի մասին  
 Յերազեկ և միշտ ինքը, վորպես մի  
 Դրախտի մասին։ — Վորի գիտության  
 Ու հարստության մասին նա այնքան  
 Կարդացել և դեռ մանուկ հասակից՝  
 Անթիվ գրքերում ու ժուրնալներում։  
 Ո, չքնաղ աշխարհ... — նա գուրգուրանքով  
 Շուրջ մեքենան մի քանի անգամ,  
 Հետո հուզմունքից փայլող աչքերով  
 Նայեց հիմնարկի վարիչի դեմքին  
 Յեվ ժպտաց մի պահ՝ գոհ ու հաղթական։ —  
 Այո՛, հուզմունքից փայլող աչքերով  
 Նայելով անթարթ վարիչի դեմքին —  
 Ժպտաց նա մի պահ՝ գոհ ու հաղթական,  
 Յեվ հետո, փայլող աչքերը կրկին  
 Հառելով փոքրիկ այն մեքենային —  
 Նա բարակ քրքջաց՝ հեգնանքով, թագուն  
 Արհամարհանքով լեցուն քրքիջով...  
 «Հի՛-հի՛-հի՛» — քրքջաց, ձեռքերը հետո  
 Ինքնագոհաբար նա քսեց իրար

Յեվ ասաց. «— Այո... սիրելի վարին,—  
Այսպիսի բաներ...» — Իսկ վարինը՝ բռն  
Հալացքն հառելով իր փայլող դեմքին,  
Զհասկանալով իր արձակած սուր  
Հեզնանքը՝ նետած նրանց հասցեյին—  
Յերեխայաբար ծիծաղեց ինքն ել...  
Կարող եր արդյոք լոկ կուսակցական  
Իր տոմսի ուժով մարդու շարք անցած  
Այդ վողորմելին,— մտածում եր նա,—  
Հասկանալ իր սուր հեզնանքը՝ հղած  
Իրենց հասցեյին:— Կարող եր արդյոք  
Այդ վողորմելին հասկանալ, վոր այդ  
Փանտաստիկական մեքենան իրոք  
Մի անհերքելի մահովձի՛ր եր  
Ուղղած իրենց դե՛մ:— Ի՞նչ ունեն սրանք,—  
Մտածում եր նա,— նրանց վիթխարի  
Հանձարի, ուժի և տեխնիքական  
Քանքարի հանդեպ... Ի՞նչ ունեն.— միայն  
Տկլոր սրունքներ և ուրիշ վոչինչ:  
Յեվ ի՛նչ, ի՛նչ հեզնանք սատանայական,—  
Մտածել եր նա հաճախ, այսպիսի  
Մարդկային տարրից, նման չքավոր  
Յերկրում՝ ունենալ կոմունիստական  
Հասարակակարգ կառուցելու ի՛ղձ...  
Յերեք տարի է անա, վոր ինքը  
Այստեղ, հայրիւրյան այս գործարանում  
Աշխատում և սոսկ մի հաշվետարի  
Պաշտոնով:— Յերեք տարի շարունակ  
Այստեղ և թափել իր քրտինքը նա,—  
Յեվ ի՛նչ և տեսել՝ ագիտութլունից  
Յեվ ստոր, փոքրիկ շահերի համար  
Իրար դեմ մղվող պալքարից բացի...



Վերևում՝ գործին անձանոթ մարդիկ,  
 Յեսասեր, իրար վռտքի տակ վորոզ,  
 Անդեմ, ինքնագոհ և ստրկամիտ։—  
 Իսկ գործարանի բանվորները... Ո,  
 Կա՛ արդյոք թեկուզ լույսի մի նշույլ  
 Այս մարդկանց կյանքում... Կարո՞ղ ե արդյոք  
 Մի բան սպասել ինքը սրանցից,  
 Յերբ ճանաչում ե սրանց ավելի,  
 Քան ինքը—իրեն։— Խեղճ, տգետ մարդիկ,  
 Որվա վաստակի համար մաքառող,  
 Մարդիկ, վոր կարծես իզուր են կրում  
 Կոշումը մարդու։— Սրանց պիտի դեռ  
 Սովորեցնես քթները սրել  
 Յեվ ապա նստել հացի... Ո, սրանց  
 Փոխելու համար սերունդներ են պետք  
 Յեվ վո՛չ թե որեր, կամ տասնամյակներ։—  
 Կարո՞ղ են սրանք հասկանալ արդյոք,—  
 Մտածում եր նա դեռ չերեկ,— թեկուզ  
 Տարրական մի միտք,— կարո՞ղ ե սրանց  
 Գլուխը մտնել վորեք վսեմ  
 Գաղափար... Ո, դա մի անիրական  
 Հրաշք եր թվում նրան դեռ չերեկ,—  
 Նա ավելի շուտ գլուխը կտար,  
 Քան կհամոզվեր չերեկ, վոր սրանք,  
 Այս քարե դարից մնացած մարդիկ  
 Կարող են լինել խոհի ընդունակ,  
 Կարող են իրենց մաքով ըմբռնել  
 Մի բարձր, պալճառ գաղափար, կամ խոհ։—  
 Նա չեր ել կարող չերևակայել  
 Դեռ չերեկ, վոր այս ածխադամ մարդիկ  
 Կարող են չերեք լինել ընդունակ  
 Ինքնագոհություն և հերոսության,—

Վոր մարդիկ այս մութ կարող են իրենց  
 Սրտերում կրել վոգեւորության  
 Հուրը սրբազան, այն հուրը, վորով  
 Դառնում ե մարդը աստված ու հերոս...  
 Այն, — տարիներ շարունակ իրեն  
 Համոզել ե նա, վոր մարդիկ այս բութ  
 Լոկ ուտելիւ չեն ընդունակ, այն, —  
 Ուտելիւ միայն ե ծանր, դժվար,  
 Անմարդավայել, սե աշխատանքի, —  
 Բայց այսօր ահա, ընդամենը մի  
 Ժամովա ընթացքում, փվում ե հանկարծ  
 Իր, տարիների ընթացքում կոփված,  
 Համոզմունքների շենքը անհողդողդ —  
 Յեվ չի հավատում իր աչքերին նա,  
 Դժվարությամբ ե իր միտքը ահա  
 Յենթարկվում իր նոր, անհասկանալի  
 Զգացմունքների յեւուն հորձանքին...  
 Յեվ վրնց պատահեց ամբողջը... — Այնքա՛ն,  
 Այնքա՛ն հասարակ ու զարմանալի,  
 Այն, — հասարակ ու զարմանալի,  
 Ինչպես մեքենան այն հրաշագործ, —  
 Հաշվող մեքենան: —

. . . Առավոտ նրան

Յեկան, ասացին, վոր չերեկոյան  
 Հայտարարված ե ընդհանուր ժողով,  
 Ուր սոցմրցության հարցն ե զրվելու  
 Քննության... Այն, — Լսեց քմծիծաղ,  
 Ինչպես լսում եր նա սովորաբար  
 Լուրերն այդպիսի, — և վորոշեց զալ: —  
 Նախ՝ այն պատճառով, վոր պարտադիր եր  
 Ներկայությունը պաշտոնյաների,



Յեվ ապա—դե, նա ի՞նչ պիտի աներ  
 Տանը։—Յեվ յեկավ։—Ժողովը տեսեց  
 Բավական չերկար։—Նախ նայում եր նա  
 Շուրջը՝ քմծիծաղ արհամարհանքով  
 (Իհարկե, գաղտնի...)—Իսկ հետո... հետո...  
 Ո, ինքն էլ զլխի չընկավ, թե հետո  
 Վո՞նց, վո՞նց գրավվեց ինքն հետզհետե,  
 Կարծես թե մեկը սուղեց նրան մեծ  
 Մի կաթսալի մեջ... Կարծես թե մեկը  
 Պիրկ, ջղուտ ձեռքով պոկեց իր խավար  
 Աչքերից բարակ, թափանցիկ մի քող—  
 Յեվ տեսավ հանկարծ նա աչն, վուր չերեկ  
 Ջեր կարող անգամ լերեակալիկ,  
 Թե կարող ե ինքն զգալ ու տեսնել...  
 Յեվ ինչի՞ց, ինչի՞ց, ինչի՞ց սկսվեց,—  
 Մտածում եր նա՝ ժողովից հետո  
 Վերադառնալիս։—Ցուրտ, խոնավ քասիւն  
 Լիզում եր նրա դեմքը, թափանցում  
 Մինչև թոքերը բավական հիվանդ,—  
 Նա չեր նկատում վո՞չ մի բան սակայն,  
 Ջեռքերը կոխած գրպաններն՝ արագ  
 Քայլում եր ցեխոտ, խարխուլ մալթերով,  
 Ու բոցկլտում եր ուղեղը՝ ջերմին  
 Խոհերից թե նոր, թե զարմանալի...  
 «Ինչի՞ց սկսվեց...»։—Հիշեց.—զահլիճում  
 Ծուխ, ծանոթ մշուշ։—Մշուշում—դեմքեր,  
 Բոլորը ծանոթ։—Նրանց ամեն ոք  
 Տեսնում եր ինքը, ու թվում եր, թե  
 Ճանաչում ե նա յուրաքանչյուրին,  
 Ինչպես սեփական իր կնոջը, կամ  
 Յերեխաներին։—Նստած եր Խեչոն,  
 Այդ վտիտ մարմնով բանվորը, վորի

Դեմքին կա նստած միշտ դժգոհութուն,  
 Ինչից—չգիտես:— Նստած եր Համոն,  
 Այդ հայհոյասեր լենինականցին,  
 Այդ պարծենկոտը, վոր չի հավանում  
 Վոչ վոքի՝ բացի սեփական անձից:—  
 Մուկուչը հետո, այդ լերիտասարդ  
 Բանվորը, վոր միշտ ծաղրում է իրեն,  
 Սիրում է խմել և զնալ կինո,  
 Թեկուզ ունի մայր, կին ու յերեխա,  
 Վոր նայում են լոկ նրա վաստակին:—  
 Նստած եր Հայրոն... Տպավորվել եր  
 Նրա ուղեղում մոնստրանդ նրա,  
 Այդ տարիքն առած, բայց անգրագետ,  
 Կոպիտ, քչախոս, միշտ անբավական  
 Բանվորի դեմքը... Այդ մարդը, վորի  
 Ամեն մի մազը ծանոթ էր իրեն,  
 Վորին չեր սիրում ինքը և վորից  
 Նա չեր սպասում վոչինչ՝ վայրենի  
 Հայհոյանքներից և մութ, չեսամոլ  
 Իղձերից բացի:— Նա չեր, այդ Հայրոն,  
 Վոր քիչ եր մոտ սպաներ մի որ  
 Իր ընկերներից մեկին՝ մի փոքրիկ  
 Վեճի ժամանակ... Յեվ ոչ ոք— հերթով  
 Մտաբերում էր նա նրանց մեկ-մեկ,—  
 Մոտ հիսուն հոգի, վոր նստած էյին  
 Սկզբում դժգոհ, հոգնած դեմքերով:  
 Դահլիճը արդեն լցված էր ծխով,  
 Հորանջում էյին արդեն ձանձրույթից,  
 Յիրը յեկավ հանկարծ դեկուցողը— և  
 Ժողովը սկսվեց:— Ինքը անկյունում  
 Կծկված՝ մի փոքր արհամարհական  
 Ժպիտը դեմքին՝ նայում էր նրան:—



Ի՞նչ եր սպասում այդ հավաքույթից  
 Ինքը—թվում է, թե պարզ է, առանց  
 Յերկար խոսքերի:—Մի պաշտոնական  
 Զեկուցում, հետո վաղուց պատրաստված  
 Մի բանաձևի քվեարկություն—  
 Յեվ ուրիշ վոչինչ:—Մութ, մեռյալ մի գործ,  
 Վոր փաթաթվում է ալդ անգրագետ  
 Խեղճերի վզին, վորպես մի վերին,  
 Անխուսափելի կամքի ցանկություն...  
 Այդպես էլ կարծես սկսվեց:—Նախ նա,  
 Այդ զեկուցողը, հայտնեց, վոր իրենց  
 Սոցմրցություն են կանչել՝ Լենինի  
 Քաղաքից՝ հսկա մի գործարանի  
 Բանվորները... (Նա այդպես էլ ասեց՝  
 «Լենինի քաղաք») և վոչ—Լենինգրադ,  
 Ինչհետև—չգիտեիր ինքն էլ յերևի...)—  
 Խոսեց նա հետո մրցություն մասին,  
 Դրա ելություն, —բերեց ցիտատներ  
 Լենինից, Մարքսից և Ստալինից,—  
 Յեվ հետո անցավ սոցիալիստական  
 Շինարարության հնգամյա հսկա  
 Պլանին: Բերեց մի քանի թվեր,  
 Հետո անպաճույճ, պարզ, հասկանալի  
 Խոսքերով պատմեց, նկարագրեց  
 Աշխատանքները նա ալդ վիթխարի—  
 Յեվ հանկարծ ինքն էլ նկատեց, վոր մի  
 Ինչ-վոր անսովոր, խոր լարվածություն  
 Լսում են ահա բոլորը նրան,—  
 Լսում է ինքն էլ—և աչքերից իր  
 Ընկնում է կարծես մի մութ վարագույր...  
 Բայց վոչ—դեռ դա չէր պատճառը իր այդ  
 Անսպասելի վոզեորություն, —

Զեկուցումը չէր... Ձե՛ վոր՝ ինչ վոր նա,  
 Այդ զեկուցողը պատմեց ժողովին—  
 Վնչ նորություն եր իր համար, վնչ ել  
 Յերկնքից իջած մարգարեություն...  
 Ձե՛ վոր, վերջապես, այդ մարդու ասած  
 Բոլոր այդ վսեմ բաների մասին  
 Ինքը բազմիցս կարդացել եր մեր  
 Բոլոր թերթերում և ժուրնալներում—  
 Կարդացել եր և... չեր հավատացել։—  
 Ուրեմն դա չէր պատճառը նրա  
 Վոգեորություն։— Բա ի՞նչն եր, ի՞նչը,—  
 Մտածում եր նա՝ արագ քայլերով  
 Կտրելով ծանոթ ճանապարհը։— Նա  
 իր ներքին անթարթ հայացքը հառած  
 Սեփական մտքի խորքը՝ ճգնում եր  
 Լրիվ ճշտություն, մանրամասնորեն  
 Վերականգնել իր բորբոքված մտքում  
 Ամբողջը։— Այո։— Զեկուցողը չեր  
 Իր խոսքն ավարտեց— դա՛լիճում արդեն  
 Տիրում եր մի խոր, ջերմին լռություն։—  
 Մի լարվածություն անսպասելի  
 Նստել եր, ծանր, բոլորի գեմքին—  
 Յեւ ինքն ել, ինքն ել համակված եր այդ  
 Խոր, անակնկալ, դու լարվածություն...  
 Բայց դա վճնց, դա վճնց, դա վճնց պատահեց,  
 Այդ ի՞նչպես չեղավ, վոր ինքն ել հանկարծ,  
 Համակված կարծես մի մութ մոդություն  
 Սկսեց տարվել մտքերով— ալնքան  
 Նոր ու անսովոր... Իր մշուշապատ,  
 Թե՛ պայծառացած աչքերի առջև,  
 Գուցե ընդհանուր այդ լարվածության  
 Ազդեցություն տակ— սկսեց հանկարծ



Վիթխարի պատկեր մի գծագրվել,  
 Մի դարմանալի, հոյակապ պատկեր...  
 Դահլիճում տիրող կապույտ լուսթյան,  
 Կապտավուն ծխի ու մարդկային այդ  
 Խոր լարվածության միջից յեխելով,  
 Զուլվելով գուցե իր լսողության  
 Սահմանին հասնող խոսքերից, նաև  
 Մարդկային խորունկ շնչառությունից —  
 Հյուսվելով նրբին, անհասկանալի,  
 Անշոշափելի տարրերից — քիչ քիչ  
 Իր պայծառացած աչքերի առջև  
 Սկսեց փռվել պատկերն այդ — աչքքան  
 Յեվ հեքիաթային, և... հասանելի —  
 Տեսնում եր նա բիւ մշուշի միջից  
 Դաշտեր, հովիտներ, լեռներ ամհի,  
 Քաղաքներ հսկա ու զործարաններ, —  
 Յեվ հասնում էլին նրա ականջին  
 Ամհի ձայներ... Բանակ եր արդյոք,  
 Մի քաղմամիլիոն, յերկաթյա բանակ,  
 Վոր արշավանքի լեւած՝ լցրել եր  
 Աշխարհը հաստատ, մեկին ձայներով...  
 Վոտքերի դոփյուն, մկանների յերգ,  
 Լարված կամքերի աճումն ամհի,  
 Փոկերի դղիւրդ, շչակների ձայն, —  
 Յեվ ձուլված իրար այս ամենը՝ մի  
 Աղմուկի նման ուրիշմային, հզոր,  
 Վորպես յերկաթյա չերաժշտություն՝  
 Հնչում եր վսեմ ու անպարտելի...  
 Յեվ այդ ամհի յերաժշտության,  
 Այդ ծխի, կապույտ մշուշի միջից,  
 Այդ բիւ լուսթյան — տեսնում եր նա կոշտ,  
 Մազապատ, անտաշ դեմքը Հայրույի,

Վոր աշնտեղ, բեմից, ձեռքը ծոծրակին,  
 Քաշում եր կարծես իր կոպիտ կրծքից,  
 Խոսքի ու խոհի անսովոր գլխից  
 Այնքան հասարակ ու գոտեպնդիչ  
 Բառեր... Ո, այս,—խոսում եր—Հայրոն...  
 Յեվ ի՞նչ եր ասում.—ո, սովորական  
 Բառեր... Հասարակ, բայց զարմանալի  
 Խոսքեր... Հասարակ,—ո, վո՛չ.—և յեթե  
 Հասարակ ելին խոսքերը նրա,  
 Ապա... ճիշտ այնքան հասարակ, վորքան  
 Պարզ ու հասարակ է վերջիվերջո  
 Հաշվող մեքենան... այն զարմանալի,  
 Հրաշք-մեքենան. — Հայրույի ասած  
 Խոսքերում անշուշտ այն եր իր համար  
 Թե անակնկալ, թե զարմանալի,  
 Վոր ինքը... այո, չէր կարող յերբեք  
 Յերևակալել, վոր նա, այդ Հայրոն,  
 Ընդունակ է գեթ գլխի ընկնելու,  
 Թե ի՞նչ են ուզում մարդիկ իրենից,  
 Ել ռւր մնաց, վոր նա զգար իրեն  
 Անխախտ մասնիկը այն մեծ բանակի,  
 Վոր Յերևանից մինչև Լենինգրադ  
 Չախում են իրար՝ ֆանտաստիկական  
 Յեվ չտեսնված մի աշխատանքի,  
 Մի վեհ, վիթխարի մի գործի համար...  
 Խոսեցին հետո մյուսները.—Յեվ—  
 Այն մարդիկ, վորոնց ինքը ամեն որ  
 Տեսնում եր, ապրում հեռները, և միշտ  
 Թվում եր նրան, թե ճանաչում է  
 Ինքը բոլորին ավելի, քան լավ,—  
 Հանկարծ հառնեցին իր առջև — այնքան  
 Կարծես անձանոթ, անճանաչելի։—



Յերեք տարի չի ահա, վոր ինքը  
 Ապրում ե այստեղ, այդ մարդկանց կողքին,—  
 Մտածում եր նա,— և ի՞նչ.— այս չերեք  
 Տարվա ընթացքում կարողացել ե  
 Արդյոք հասկանալ այդ մարդկանց, տեսնել,  
 Զգալ, թե ինչի՞մ, ինչի՞մ են նրանք  
 Ապրում ու շնչում:— Ճգնել ե արդյոք  
 Ըմբռնել նրանց առօրյա կյանքի  
 Ու աշխատանքի իմաստը,— նրանց  
 Անդուլ մաքառման ե ընդվզումի  
 Իմաստը:— Ո, վո՛չ... Վերցնենք թեկուզ,—  
 Մտածում եր նա,— այդ նույն Հայրուին.  
 Անցել ե անփութ թ այդ մարդու կողքից  
 Ինքը ամեն ոք, տեսել ե միայն  
 Նրա մարդկային թերութունների  
 Կեղևը, նրա կոպիտ խոսքերի,  
 Նրա ձեռների, կեղտոտ մատների  
 Կոշտերը միայն:— Յե՛վ այսպես— բոլոր  
 Այդ մարդկանց, նրանց առօրյա անդուլ  
 Աշխատանքների և նրանց ամբողջ  
 Գործի նկատմամբ:— Անանցանելի  
 Մի պատնեշ ե միշտ յեղել բարձրացած  
 Կարծես իր— և այդ բանակի միջև,  
 Մի զարմանալի անթափանց պատնեշ,  
 Վորը չես կարող թեկուզ շոշափել,  
 Բայց պինդ ե այդ նուրբ պատնեշը գուցե,  
 Քան քարը:— Այ՛ո:— Յե՛վ պատնեշը արդ,  
 Քաշված իր— և իր շրջապատի մեջ—  
 Ինչի՞ց ե արդյոք դա առաջացել...  
 Ինչից, ո, ինչից,— հարցընում եր նա,—  
 Յե՛վ չեր հասկանում, չեր գտնում դրա  
 Պատճառն իսկական:— Անդրադառնալով

Իր ամբողջ կյանքին՝ փորձում եր գտնել  
 Այդ հարցին նա մի պատասխան։— Փոքրիկ,  
 Խուլ, գավառական քաղաքում ահա—  
 Իր հայրը՝ չարչի, թե՛ արհեստավոր...  
 Ո, և՛ այս և՛ այն։— Տանը շարունակ  
 Չքավորութուն, խեղճութուն, կարիք...  
 Յերկդասյան դպրոց. հետո սեփական  
 Ջանքերով մի կերպ ընկած Յերևան  
 Սովորում ե նա թեմականում... և—  
 Դա յե՛րբ եր, — թողեց դպրոցը, մտավ  
 Հաշվապահական կուրսեր— և ահա  
 Դարձավ հաշվետար։— Տասնըլոթ թվին  
 Նա ամուսնացավ— և այնորվանից  
 Աշխատում ե նա գրասենյակներում։—  
 Կարգեր են փոխվել, բանակներ յեկել,  
 Բանակներ անցել— իսկ նա միևնույն  
 Մատյանների մեջ թաղված շարունակ՝  
 Ապրում ե մի գորշ խխունջի նման,  
 Դժգոհ իրենից, դժգոհ ըստրից,  
 Դժգոհ՝ մանավանդ անհասկանալի  
 Այս «ընկերներից», վորոնցից միայն  
 Սարսափել ե ինքն ու ակընկալել  
 Ամենայն չարիք ու գժբախտություն...  
 Հեռու չե չեղել ինքը շարունակ, —  
 Մտածում եր նա, — կովից, պալքարից. —  
 Զի՛ չեղել չերբեք նա կուսակցական,  
 Դժգոհ ե չեղել և դաշնակներից,  
 Բայց ինչո՞ւ, ինչո՞ւ չի հավատացել  
 Յե՛վ սրանց... Ինչո՞ւ... Ի՞նչն ե վախեցել  
 Կորցնել, բացի իր խեղճությունից,  
 Իր ճղճիմ, խղճուկ, անասող գոյության  
 Դորշ, անհրապույժ հեռանկարից...



Խխուռնջի նման կառչած շարունակ  
 Իր ընտանիքին, հոգսերին, հացի  
 Չնչին փշրանքին, թաղված գլխովին  
 Այդ ամենի մեջ—չի կարողացել  
 Սթափվել, բանալ աչքերը, տեսնել  
 Իր շուրջը թափով թնդացող կյանքի  
 Ընթացքը թե՛ վեհ, թե՛ հերոսական...  
 Ինչո՞ւ, ո, ինչո՞ւ,—հարցնում եր նա  
 Ինքը իրենից—և չեր կարենում  
 Գտնել իր հարցին պատասխան։—Արագ,  
 Կուրծքը դեմ տված քամու հորձանքին,  
 Քաշլում եր նա՝ վողջ մարմինը թեքած,—  
 Յեվ քամու հնչեղ հորձանքում նա այլ  
 Զայներ եր լսում, նոր ու կատաղի,  
 Տեսնում եր դեմքեր կոպիտ, անձանոթ,—  
 Յեվ բարձրանում եր նրա մշուշոտ,  
 Բայց պայծառացած աչքերի առջև,  
 Յեղնելով կարծես գիշերվա մուժից—  
 Մեր մեծ առույան... Մի նոր, վիթխարի  
 Իմաստ եր նրա աչքին ստանում  
 Այն ամենը, վոր ինքը ամեն ոք  
 Տեսնում եր, սակայն՝ անհասկանալի  
 Ինչ-վոր պատճառով՝ նա չեր հասկանում  
 Մինչև այս գիշեր... Առաջին անգամ  
 Այդ հաշվետարը, այդ մարդը փոքրիկ,  
 Վոր ապրել եր միշտ իր փոքրիկ, ճղճիմ,  
 Չնչին հոգսերով,—առաջին անգամ  
 Իր անասող կյանքում զգաց նա կյանքի  
 Աճումն, ահսելի ընթացքը,—նրա  
 Յերկաթ քայլերի դոփուռն անհողողող։—  
 Այնտեղ, մշուշում, տեսնում եր նա մի  
 Հսկա գործարան... Քաղաքում հեռու,

Ուր չի չեղել նա իր կյանքում չերբեք,  
 Վորից բյուրավոր վերստեր են իրեն  
 Բաժանում,— աշնտեղ, քաղաքում այդ մեծ,  
 Վոր առաջնորդի անունն է կրում  
 Բազմութունների այս արևակամ,—  
 Տեսնում եր աշնտեղ նա կրակներ բյուր,  
 Աստղերի նման փայլող կրակներ,  
 Վորոնց շուրջն անդուլ յեռում են այս մեր  
 Հայրույի նման ածխադեմ մարդկանց  
 Հոծ բազմութուններ... Այդ կրակներից  
 Զգվում են ահա դեպի խորքը այս  
 Հեռավոր յերկրի— կրակն թեկեր։—  
 Զգվում են թեկեր վոսկեցուլ, աստղի  
 Շողերի նման։— Յերբ նայում է մարդ  
 Կիսախուփ աչքով հեռու աստղերին—  
 Այդպիսի՝ ահա վոսկեցուլ թեկեր,  
 Զգվելով այդ ջինջ, պայծառ աստղերից՝  
 Կապում են մարդու հալացքը նրանց,  
 Այդ ջինջ աստղերին։— Առաջին անգամ  
 Նա զգաց այդ պիրկ, անմար թեկերի  
 Գոյությունը— և աշխարհը նրա  
 Աչքերին հանկարծ լայնացավ, ձգվեց,  
 Դարձավ անսահման, անծիր, անեղբւրք,  
 Յերկնքի, հոգու և տիեզերքի  
 Նման անեղբւրք։— Թեթև քայլերով  
 Տուն հասավ, թակեց նա դուռը։— Քամին  
 Շաշում եր դեռ թունդ, թոչում սանձարձակ։  
 Գիշեր եր արդեն, յերբ վերադարձավ։—

Արագ մտավ տուն։— Կինը հարցական  
 Հառեց մի վայրկյան աչքերը նրա  
 Շորերին, դեմքին— և վռչինչ հասեց։—



Սենյակում, փայտյա սեղանի վրա,  
Դրված եր մի հին, դեղին ինքնայն,  
Կողքին — մի քանի դատարկ բաժակներ —  
Յեւ ուրիշ վոշինչ: — Թափառ աչքերով  
Նայեց մի վայրկյան այդ ամենին նա,  
«Թե՛ կա» — հարցրեց մեքենայաբար  
Կնոջը — և յերբ կինը որորեց  
Գլուխը — նա լուռ վերարկուն հանեց  
Յեւ գնաց, պառկեց անկյունում դրված  
Անկողնի վրա: — «Հարբած ե» իրեն  
Հարց տվեց մոքում կինը, հետո լուռ,  
Զարացած դեմքով չանչ արավ նրան —  
Յեւ ինքն էլ, իր հին շորերն հանելով,  
Մտավ անկողին: —

Սենյակի մթնում,  
Խոր լռության մեջ այդ գիշեր չերկար  
Մտածում եր նա՝ աչքերը հառած  
Մութ առաստաղին: — Յեւ սրթսրթալով  
Յերբ վերջապես նա աչքերը փակեց  
Յեւ քունը՝ խոնավ, գգվող թաթերով  
Սկսեց իջնել նրա աչքերին —  
Դեռ հնչում եյին նրա ականջին  
Ամենի խոսքեր ու վոտնաձայներ,  
Կրակներ եյին իր դեմ կայծկլտում: —  
Յեւ մթության մեջ թվում եր նրան,  
Թե իր հոգնարեկ մարմնի վրայով  
Դոփելով անցնում, անցնում են անվերջ  
Հայրույի նման ածխադեմ մարդկանց  
Յերկաթյա գնդեր, — գնում են դեպի  
Յերկաթից, կամքից ու աշխատանքից  
Կոփվող մի աշխարհ . . . . .  
. . . . .

Իսկ առավոտյան

Յերբ յեկավ կրկին նա գրասենյակ՝  
 Քնատ եր դեմքը, դժգոհ ու մռայլ.  
 Գիշերը կարծես յեղել եր քեֆի  
 Յեվ այժմ ծանր եր գլուխը, սիրտը  
 Խառնում եր կարծես—և աշխարհը վողջ  
 Թվում եր պղտոր, մթին զառանցանք։—  
 Իր մթնած, կիտված հոնքերի տակից  
 Նայում եր մեկ-մեկ նա շուրջը, նրանց,—  
 Յեվ նրանք կրկին նսւյնն եյին թվում,  
 Նույնն ելին թվում այդ մարդիկ նրան՝  
 Նույն սովորական և անհրապույր,  
 Կարիքից, հոգսից ու աշխատանքից  
 Բթացած մարդիկ... Յերեկվա իր մեծ  
 Խոհերից նրա պղտոր ուղեղում  
 Մնացել եր լոկ մի մթին մորմոք,  
 Մնացել եր լոկ խղճի խայթի պես  
 Մի ծանր զգացմունք, վորը ճգնում եր  
 Նա իր մեջ խեղդել։—Նման զգացմունք  
 Ունենում ե մարդ, չերբ հանցանք ե մի  
 Կատարում դադարի.—խայթում ե խիղճը—  
 Յեվ իզուր ե նա ճգնում թաղցնել  
 Սեփական խղճից զխտակցութունը  
 Այդ անդառնալի հանցագործության...  
 Այդպես չերբեմն հարբելուց հետո,  
 Մլուս առավոտ ամաչում ե մարդ,  
 Յերբ հիշում ե, վոր ինչ-վոր անձանոթ  
 Մի մարդու առջև բացել ե սիրտը  
 Գիշերը՝ խելքից ընկած ժամանակ...  
 Հեռու, մարմրոզ ցոլքերի նման  
 Յուլացին մի պահ նրա պղտորված  
 Գիտակցության մեջ յերեկվա իր մեծ



Խոհերի վերջին փշրանքները — և  
 Սուզվեցին անդարձ ուղեղի մոլորում:—  
 Նա թթված գեմքով բացեց իր հսկա  
 Հաշվեմատյանը, մի վերջին անգամ  
 Բուժ, դժգոհ դեմքով իր շուրջը նայեց —  
 Յեվ խորասուզվեց իր մանրակրկիտ,  
 Անվերջ, չհատնող հաշիվների մեջ:—  
 «Հը, հո չե՞ս հարբել գիշերը» — նրան  
 Հարցրեց Կարոն, հաշվապահը:— Նա  
 Լուռ, անթարթ նայեց նրա աչքերին  
 Յեվ ասաց. — «Այն... մի փոքր... յերեկ...  
 Ժողովից հետո...» — Յեվ կրկին նա լուռ  
 Թեքվեց իր հսկա մատյանի վրա  
 Յեվ խորասուզվեց հաշիվների մեջ...

.....

Այսպես

Մի՛ անգամ ահա այդ փոքրիկ մարդու,  
 Այդ հաշվետարի մոտով, այդքան մոտ,  
 Թնդալով անցավ մեր մեծ առողջան,  
 Նա անգամ զգաց, շոշափեց մտքով  
 Ընթացքը նրա հսկավիթխարի, —  
 Նայեց նա մի պահ հրաշքի նման  
 Իր աչքերի դեմ բռնկված այդ վեհ,  
 Այդ շոնդալով անցնող պատկերին —  
 Յեվ ընկճվելով նրա ամենի  
 Մեծության ներքո, այդ անգրկելի,  
 Անհուն վեհության — սուզվեց նա կրկին  
 Իր սովորական մոմտանքի մեջ...

Յեվ նովեմբը մեր վերջացավ այսպես:—

## ԳԱՆԳՐԱՆԵՐ ՏՂԱՆ

Փակում եմ հոգնած աչքերս մի պահ  
 Յեւ տեսնում եմ յես—այնքան, այնքան պարզ.—  
 Գալիք մի դարուն, վառ մի ուր ահա,  
 Յերկինքը կապուլտ, որը հրավարս:  
 Արևը արդեն բարձրացել է քիչ,  
 Զնգում է որը, ինչպես յերգեհոն—  
 Ու կապուլտ, կապուլտ, կապուլտ լերկնքից  
 Թափում է կարծես յերգ ու խնդութ յուն:—  
 Վոլորապառուլտ ձգվում է շոսսեն  
 Նոր Յերևանից դեպի Արարատ.  
 Ինչքան են արդյոք տարիներ հոսել  
 Մինչև գարնային այս որը զվարթ:  
 Շոսսեյի լերկու կողմերում ահա  
 Տներ, փողոցներ ու գործարաններ,  
 Կանաչ պարտեզներ, ծաղիկներ առատ,—  
 Այդ ով է արդյոք այսքանը ցանկ:  
 Ընկած են թռերն իրարից հեռու,  
 Գործարանները մեջընդմեջ կեցած,  
 Վո՛չ ծուխ, վո՛չ փոշի.— և լույս տներում—  
 Ժիր մարդիկ ահա՝ դեռքերին ծիծաղ:—

Յեւած արթնացող քաղաքից՝ ահա  
 Վոլորապառուլտ շոսսեյով այդ լայն,  
 Առջևում կարմիր մի դրոշ պահած՝



Անցնում ե վաշտը պիտներակահան:  
 Հնչում ե նրանց դոփյունը հաստատ,  
 Թմբուկն ե թնդում ութմով կորովի,  
 Անցնում են նրանք քայլերով վստահ,  
 Աչքերով հստակ, դեմքերով թովիչ:—  
 Քայլում են նրանք շոսսեցով, հետո  
 Կտրելով այդ լաչն, ասֆալտն շոսսեն՝  
 Անցնում են ահա այն ձորի մոտով,  
 Ուր աղմկաձայն Զանգուն ե հոսում:  
 Զանգուն ե հոսում ներքևում զվարթ,  
 Հստակ ջրերով անվերջ կարկաչում,  
 Իսկ աչնտեղ ահա—մի հին ցանկապատ  
 Ու քարեր՝ ընկած կանաչի միջում:—  
 Քարեր, հին քարեր, վաղուց մոռացված,  
 Անանուն, անգիր, ննջում են աչնտեղ,  
 Ուր լուսթյունն ե իշխում ահասատ  
 Ու հուշն ե թռչում՝ հավիտյան անթև:  
 Ժպտում ե վերից չերկինքը կապույտ,  
 Արևն ե զնգում անհուն զնգոցով,  
 Յեվ վառն ե անցնում քայլերով անփուլթ,  
 Արբած արևի կենսատու բոցով:  
 Հնչում ե նրանց դոփյունը հաստատ,  
 Թմբուկն ե թնդում աշխուժով մի ժիր,  
 Յեվ մանուկների աչքերում նստած՝  
 Գարունն ե ժպտում արևի ուժին:—  
 Անցնում են նրանք ծիծաղով հնչուն  
 Այդ անխոս, այդ հին քարերի մոտով,

Նրանց ծիծաղում կլանքն ե կարկաչում,  
Գարունն ե կանչում անափ կարոտով:—

Անցնում են նրանք:— Ու նրանց լերթից,  
Աչքերը հառած քարերին խաղաղ՝  
Հանկարծ բաժանվում ու մոտ ե գալիս  
Մի կապուտաշյա, գանգրահեր տղա:—

Պրոներական փողկապը վզին,  
Վոտները մինչև ծունկերը բռպիկ,  
Ճակատը բարձր, աչքերը լուսե,  
Հագին սպիտակ, կապտերիզ շապիկ—  
Նայում ե նա ջինջ, պալծառ աչքերով  
Գերեզմանատան քարերին մի պահ,  
Հետո կարծրացած փոշին ե քերում  
Նա մի հին քարի վրայից ահա:  
Նայում ե ապա նա փոշոտ քարին  
Աղեղանման հոնքերի տակով...

Դրված ե վրան.— «Յեղիսե Զարեհց,  
Բանաստեղծ, ծնված Մակու Բաղաբում»:

Կարդում ե նա իր աչքերով ծավի,  
Ժպտում ե, հիշում կարծես ինչ-վոր բան,  
Քաղում ե ապա մի կանաչ բավիղ—  
Ու շարունակում իր թողած համփան:  
Ծիծաղով հնչուն ու արծաթաձայն  
Միանում ե նա կրկին շարքերին—  
Յեվ, հուշի նման հավիտյան անցած,



Մնում ե հանդում մի կորած շիրիմ...

. . . . .

Լսում ես՝ ալիտեղ իմ սիրտն ե թաղած,—

Կոխոտքի նրան քայլերով քո լույս,

Ո, դժւ, գալիքի գանգրահեր տղա,

Մեր լսով գալիքի վոսկեհեր մանուկ...

1928—1929

ՄԱՆՐ ԲԱՆԱՍՏԵԼԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ



## ԱՆՎԵՐՆԱԳԻՐ

Հիշում ես՝ ինչքան  
Սիրում եիր դու  
Այն լավ աղջկա  
Աչքերը խնդուն,  
Գգվանքները հեղ  
Այն լավ աղջկա,  
Վոր սիրում եր քեզ  
Ու հիմա չկա...  
Հիշում ես՝ անգամ  
Այն պահին ահեղ  
Ժպիտով կարկամ  
Նա դեմքիդ նայեց—  
Յեղ ասաց քեզ նա.  
«Մի լինիր տրտում,  
Վոր պայծառ ֆնա  
Հուշս քո սրտում...»

## ՍԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻԿԻ

Արև՝ ունեա քո աչքերում,  
 Քո աչքերում, քո ձեռքերում,  
 Քո ալիք փամփլիկ թաթիկներում,  
 Քո խատուտիկ աչիկներում: —  
 Քո խատուտիկ աչիկներով  
 Պիտի նայես մի որ հեռուն,  
 Դրոշ պիտի պահես մի որ  
 Քո ամրացած ձեռիկներում —  
 Ու չմարող իմ չերգերով  
 Պիտի գնաց զեպի գրոհ...

1929



## ԳՈՎՔ ԽՆԴՈՒԹՅԱՆ

ՍԻՐԵԼԻ Ս.-ԻՆ

Վորպես մի բաժակ  
 Հուրհուրան գինի,  
 Քո սրտից թող նա  
 Անբաժան լինի:

Վոր ընգվզումի,  
 Պալքարի ժամին  
 Խինդով հընդունի  
 Քեզ գոռ թշնամին:

Յերգս թող քո մեջ  
 Խնդու թլուռն վառի,  
 Վոր արթուն լինես  
 Ու մնաս արի:—

## ՆՄԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՆԵՅԻՆ

ՍԻՐԵԼԻ Ռ.-ԻՆ

Յերգում եր պոհաը՝ նստած վրանում.—  
 «Մարդիկ հեռանում են ու հնար մոռանում...  
 Այդպես մոռացավ ինձ աղջիկը այն չար,  
 Յեվ դա յեր, ո, դա յեր, վոր դարձավ պատճառ,  
 Վոր ինքս, իս ինքս մի որ հեռացա—  
 Յեվ... Հանցած գաբունը՝ նրան մոռացա...»—  
 Ել ինչ ես յերգում դու՝ նստած վրանում—  
 Յեթե հեռանում են ու հնար մոռանում...

1929



## ԱՆՎԵՐՆԱԳԻՐ

(Հայնեյան մտախիզ)

Այն սարսափ լերկրում, քարքարոտ լերկրում  
 Մենք գնում ելինք ու յերգեր յերգում:—  
 Մեր ձեռքն կարմիր, հուրհուրան զրոշ՝  
 Մենք լերգում ելինք, վոր գնանք զրոհ:  
 Յես յերգով ելի հպարտ, նա ղենքով—  
 Յես պոետ ելի, նա արի ղինկոմ:  
 Մենք գնում ելինք՝ նստած չալ ձիեր,  
 Մեր շուրջը կռիվ, թշնամու ղիեր,  
 Մեր դեմը ձմեռ, մեր դեմը արուն—  
 Ու ձմռան միջից ժպտացող գարուն...

Այն սարսափ լերկրում, քարքարոտ լերկրում,  
 Մենք կռվում ելինք ու յերգեր յերգում...

## ԱՆՎԵՐՆԱԳԻՐ

Անիվ իմ, դարձիր...

Վահան Գրիգորյան

Քո լերգերը՝ բոց, քո յերգերն՝ հրե,—  
 Բայց այդ կոմիերիտ Վահանի նման  
 Դու յերբ ես, դու չերբ ես, դու չերբ ես գրել։—

Մասներով քո թույլ, մասներով բարակ,  
 Դու յերբ ես գրել այդքան հասարակ,  
 Այդքան պարզ, այդքան ջինջ ու համոզիչ,  
 Ինչպես լերգեցիկ անխփ ե արագ  
 Պատվում անա Վահանի ուժից։—

Հիմա՝ լծվելով քո դժվարին գործին—  
 Այդպես դու, ո, չերբ իմ, անիվ իմ, դարձիր . .



## ԱՆՎԵՐՆԱԳԻՐ

Ել չես սիրում  
Մշուշ ու մուժ, աշուն ու ամպ:  
Գերում ե՛ք եղ  
Հիմա ձմեռն իր խստությամբ:  
Զգտում ես դու  
Եպիֆանյան իմաստության:—

Գերում ե՛ հիմա  
Քեզ ձգտումն այս վիճ,—  
Կարո՞ղ ես սակայն  
Դու դրան հասնել . . .

## N. N.-ԻՆ

Դարձանք մենք տրդեն հասակ առած մարդ,  
 Թե յես և թե դու:—Ու պետք է հիմա,  
 Ինչպես հարկն է՝ մեզ «խելացի պահենք»—  
 Բայց յերբ ենք արդյոք մենք լեղել ջահել . . .  
 Ինչպես Վրյոնն է մի որ վողրացել  
 Զահելությունը իր խալտանկար—  
 Այդպես, թե կուզես, մենք պետք է հիմա  
 Նզովենք միայն մեր չար, հողմածեծ  
 Զահելությունը, վոր անցավ արդեն—  
 Յեվ պայծառ սրտով ընդունենք ահեղ  
 Այս կեսորը, վոր բացվում է մեր դեմ:—



## ԱԿՍԵԼԻՆ՝ «ՄԹՆԱԶՈՐԸ» ԿԱՐԴԱԼՈՒՑ ՀԵՏՈ

Քո «Մթնաձորում» թախիժ ե ծորում  
Ու կարոտ՝ մանկութ հարազատ ձորի,—  
Աշխատիր սակաւն, վոր մութ ալի ձորում  
Քո պայծառ ուղին անդարձ չկորի։—

1927

## ՍԻՐԵԼԻ Ա-ԻՆ

Յես չեմ մոռացել քեզ, բարեկամ,  
 Յեւ չիշում եմ քեզ կրկին, կրկին,  
 Ինչպես անցորդը թափառական  
 Հիշում ե միշտ իր անցած ուղին:—  
 Սիրով ե չիշում նա ուղին հին,  
 Գուցե թախիծով, սակայն յերբեք  
 Նա չի ցանկանա կրկին, կրկին  
 Թողնել հեռուներն ու դառնալ չեա...  
 Յերբ անցած ուղին հուշով անշեջ  
 Ոոցում ե, ինչպես կարոտի նետ,—  
 Խեղդում ե նա աչք կարոտն իր մեջ,  
 Վոր յերբեք, յերբեք չդառնա չեա...

1929. 27. XI

Յերևան



## ՄԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԳՐՔԻ ՎՐԱ

Ձընդունես, ընկեր, այս գիրքս աշնակես,  
Ինչպես աղջիկն է նվեր ընդունում.—  
Սպասում է նա դրան անհամբեր,  
Իսկ ստանալիս—մի կողմ է դնում:—

1928

# N.-ԻՆ՝ ԼԵՆԻՆԳՐԱԴԻՑ

Պետրոս Մեծի այս քաղաքից,  
 Վոր Լենինի քաղաքն է ել,  
 Գրում եմ քեզ ահա, ընկեր,  
 Տողերը այս տրամաթախի՞ծ:—  
 Տխրություն կա մի անարգել,  
 Վոր հասակ ենք առնում մենք ել,  
 Դառնում ենք հուշ, դառնում անցյալ,  
 Ինչպես արտը՝ արդեն հնձած,  
 Ինչպես շենքերն այստեղի՞ հին,  
 Վոր, տե՛ս, կառչած միայն չերգին  
 Այն պոետի մեծաքանքար—  
 Հուշ են դարձել հիմա հանգած:—  
 Հուշ են դարձել, միրած մահի,  
 Դարձել են միֆ, — սակայն, նայի՛ր —  
 Կանգնած է դեռ ահա անգրին  
 Այն գանգրահեր Ալեքսանդրի,  
 Այն պոետի՝ սրտով հրկեզ,  
 Վոր այն մռայլ հեռուն յերգեց  
 Իր յերգերում մի որ հուրհուր—  
 Ու մնաց մե՛ծ, մնաց մաքուր...

Մենք ել գուցե, մի սլաճառ հուր  
 Վառած բորբոք սրտերում մեր՝  
 Յերգենք երերն այս անվեհեր—  
 Ու մնանք մե՛ծ, մնանք մաքուր...



## ԸՆԹԵՐՑՈՂԻՍ

Ուղարկում եմ գիրքս քեզ,  
Ո՛վ դու ընթերցող:  
Կուգես՝ կարգա, ո, կուգես՝  
Շարափը մի կողմ: —

Գրել եմ չես իմ գրքում  
Այնպիսի տողեր,  
Վոր չի գրի իր չերգում  
Յեւ վճռի մի պովետ: —

Լավ եմ գրել չես, թե վատ —  
Սրտովդ իմացիր, —  
Ձկն ուրիշ քննադատ  
Քո սրտից բացի:

## ԸՆԹԵՐՑՈՂ ՊՈԵՏԻՆ

Ջարմանքով գուցե նայես զու իմ այս  
 Գրքի եջերին՝ թե անշուք, թե պարզ,  
 Հեզնանքով գուցե ժպտաս ու ասես,  
 Թե պոետը մեր այս ուր և հասել...  
 Բայց հասել և նա մի ջինջ պարզության,  
 Վոր ձեռք և բերվում «ղժվար վարժությամբ»։—

Մեզ համար արդեն ուղի չե անցած  
 Համաշխարհային ռիթմը նվագուն,—  
 Սովորի՛ր զբեկ զու պարզ ու պայծառ,  
 Ինչպես այն չքնաղ պոետը գանգուր,  
 Վորի յերգերում թե քորեյ, թե չամբ  
 Դյուլթում են իրենց տոկուն պարզությամբ,  
 Թովում են թավով, առնությամբ արի—  
 Սրանով և նա ահա վիթխարի։



## ՀՐԱԺԵՇՏ ԼԵՆԻՆԳՐԱԴԻՆ

Մնաս բարձժ, քաղաք դու մեծ,  
 Քաղաք զգաստ ու մաքառող,  
 Յես սիրեցի առորյան քո,  
 Ընթացքը քո թե վեհ, թե վես:  
 Յես սիրեցի փողոցներիդ  
 Հեռուն թե լուրջ, թե գրավիչ,  
 Նեան՝ հազած գորշ գրանիտ,  
 Արձանն անդամ Պետրոս Մեծի,  
 Վոր բարձունքից իր ահեղի  
 Նայում ե հին պալատներին,  
 Ուր իր համար զարմանալի  
 Կյանք ե չեռում հիմա ուրիշ,  
 Մի կյանք՝ ուրիշ չեռանդով լի,  
 Ուրիշ խանդով հրապուրիչ—

Մնաս բարձժ, քաղաք գործի,  
 Աշխատանքի մայրաքաղաք,  
 Մաքառումի միապաղաղ,  
 Բալց հավիտյան ստեղծագործիչ,  
 Սովորեցի ալատեղ չես ել  
 Լինել զգաստ, լինել տոկուն,  
 Իջավ ալատեղ իմ խոլ վոդուն  
 Իմաստութուն պարզ ու վսեմ,  
 Սովորեցի գնալ անդուլ  
 Սերունդների ճանապարհով,  
 Ինչպես ահա գնում ես դու,  
 Ո, վեհ քաղաք,— մնաս բարձժ...

## ՆԵԿՐԱՍՈՎԻՑ

(Փոխադրութիւն)

Մի տրանջա, հաւաքիւր քո ուժերը դու,  
Ուղիք դժվար ե թեկուղ, բայց թեթև ե ձիւ։—  
Հուրը նետած քո կշանքի մնացորդը տուր,  
Թող կրակը մինչև վերջ քո հողին խանձի։

1929



## ՀԱՎԵԼՎԱԾ

ՆԵՐՔՈՂ ԱՌ ՔՆՆԱԴԱՏՆ Ռ. Ռ. ՄԻՅԵՎՆՈՒՅՆ ԺԱՄԱՆԱԿ  
ԵՊԻԼՈԳ ՍՈՒՅՆ ԺՈՂՈՎԱԾՈՒԻ

## ՆԵՐՔՈՂ ԱՌ ՔՆՆԱԴԱՏՆ N. N.

Решил Фиглярин вдохновенный,  
Что я в дворянстве мешанин.

А. Пушкин

Ո, դու, նախիրյան ժարքսիզմի չտեր  
Հազած ֆիլիստեր,  
Ո, դու, պատահմամբ սերտած մտքերի  
Մի խղճուկ գերի  
Դարձած կրետին—  
Լսիր մի անգամ խոսքը պոետի,  
Վորին դու անշուշտ հայհոյես պիտի...  
Զարմանում ես դու, վոր յերգ եմ գրել  
Յես այսոր անա մաքառման մասին  
Յեմ շթառամող խոսքերով հրե  
Գովք եմ կարդացել անդուլ յերազին  
Յեմ բարձունքների ցնորքին անհաս.—  
Ո, հավատացիր, ընկեր սիրելի,  
Վոր հավետ անմահ մի յերազ ե այս։—  
Զի կարող լինել մեր վոգին գերի  
Սերտած խոսքերի, կռտած մտքերի,—  
Թե ապրում ե նա ու շնչում ե դեռ՝  
Զգտելու յե նա անհաս արիերի,  
Վորքան ել անա դու այսոր պնդես,  
Թե չկա ուղի ինքնախոյացման,  
Խոլ, անխոնջ վոգու անդուլ ժաքառում,  
Վոր հասել ենք մենք «անդորրի» հիմա—  
Լենինյան այս վեհ գործերի զարում...  
Զե վոր լուծված են քեզ համար բոլոր  
Հարցերը, անգամ «պրոբլեմը սիրո».—  
Ո, բոլոր, բոլոր հարցերին արդեն



Դու վաղուց պատրաստ լուծումներ ունես,  
 Դեզ համար չկա ասպարեզ, վորտեղ  
 Դու անդորրութեան հասած չլինես: —  
 Իսկ չե՞ս... Ի՞նչ պահեմ իմ հանցանքը լես.  
 Բարդ ե ինձ համար աշխարհը մի քիչ  
 Յեւ ըստ արդ քարդ հարցերի հանդեպ  
 Չեմ կարող այսոր յես թեթե խանդով  
 Արձակել միայն հիացմունքի ճիչ: —  
 Հեշտ ե ձեզ համար մեր ուղին այսոր  
 Յեւ չե՞ք նկարել շարունակ մեզ դուք,  
 Ինչպես ձեր գոված պոետն ե ասել —  
 Այս ուղին, վորպես մի «թեթե վոստյուն»: —  
 Փոված ե այսոր կրկին ձեր առաջ  
 Այս ուղին, վորպես հարսանիքի չերթ,  
 Յեւ դուք, չերջանիկ թմբուկներ առած,  
 Յերգում եք անվերջ հարսանիքի չերգ —  
 Յեւ ինքներդ ձեր յերգով հիանում, —  
 Հասկանում եք դուք, թե ի՞նչ եք անում...  
 Չեմ ուզում զնալ յես ճանապարհով,  
 Ուղիով ձեր այդ՝ զարմանալի հեշտ,  
 Գերադասում եմ ուղին քարքարոտ,  
 Վորով շարունակ ընթացել եմ յես: —  
 Յեւ միք շփոթի ձեր ուղին այդ հեշտ,  
 Այդ ուղին թեթե խաղի ու պարի —  
 Պրպիտարիատի ճանապարհի հետ,  
 Նրա մաքառման, նրա պայքարի: —  
 Այդպես չի այսոր շարքերով իր կուռ  
 Սրբում նա իրեն պալքարի բոցում,  
 Յեւ աշխատանքի հնոցում անդուլ  
 Այդպես չի այսոր նոր կլանք կառուցում: —  
 Յես չեմ ել ձգտում, վոր դուք ինձ շոյեք. —  
 Դուք չեք, վոր պիտի սներ իմ վողին, —

Կանցնեմ իմ ուղին չեա, վորպէս պոետ,  
 Զգտելով միայն, վոր ժանդ չչոքի  
 Իմ վոգու վրա և վնչ մի վայրկեան:—  
 Յերգել եմ ալստեղ յեա խոհ ու պալքար  
 Յեմ խնդությունն եմ յերգել իմ վոգու,  
 Յերգել եմ նրա ձգտումն անդադար,  
 Զգտել եմ յերգով, վոր ֆնա տոկուն  
 Նա թէ տխրութեան, թէ հոգսի ժամին,  
 Ինչպէս հնոցի հուրը բորբոքուն,  
 Ինչպէս ովկիանում թնդացող քամին:—  
 Յեա գիտեմ հիմա, վոր հարսանիք չի  
 Մեր կյանքը այսօր, կամ «թեթեւ վոստյուն»,  
 Վոր վոշի յի լոկ այն վոգուն նստում,  
 Վոր կարծում ե, թէ թեթեւ կթռչի,  
 Ինչպէս ծիծեռնակ՝ դեպի կյանքը նոր:—  
 Յեա գիտեմ հիմա՝ վորպիսի գնով,  
 Վորպիսի դժվար ջանքերով եմարդ  
 Կուում իր վոգին, վոր նա կարծրանա,  
 Կտիվի—և ապա պիտանի դառնա  
 Այս դժվար, այս բարդ պալքարի համար:—  
 Վոր չի վերացել դեռ կյանքից ներկա  
 Յեղկությունը՝ մեր խոհերին նստող,  
 Յեմ վորբությունը մարդկային դեռ կա,  
 Յեմ վոգու, վոգու ճորտությունն ստոր...  
 Յեա գիտեմ հիմա, վոր մարդը հաճախ  
 Կարող և մղել մարտ բաղմաշատ,  
 Բայց վոգով կքվի, թեքվի չարաշար  
 Սիրտ, կորստի, կամ հոգսի առաջ—  
 Թէ խոհերը նա այն բաղմապիսի,  
 Վոր ընդունում և ուղեղով իր ցուրտ—  
 Զթրծի անդուլ և չնրկիզի  
 Վոգու, տանջանքի անմինջ հնոցում:



Դժվար ե լեղել իմ անցած ուղին  
 Յեւ ի կորուստներ եմ ունեցել յես մեծ,  
 Յեւ ճանապարհս լեղել ե հզի  
 Խոր անկումներով, — սակայն ահա յես  
 Վտաքի յես լեկնում կրկին անվեհեր՝  
 Խոր տանջանքներով իմ վոգին կոփած,  
 Յեւ մաքառում եմ կրկին ահա վեր՝  
 Նինջ ու հոգնություն ներքեում թողած: —  
 Վոգի յես տալիս ու թափ ներշնչում  
 Ինձ կրկին աչի մեծ պայքարը նրանց,  
 Վորոնց զժվարին, բայց հաղթական չուն  
 Յերգել եմ յես իմ յերդով հուրհուրան: —  
 Յեւ կերգեմ կրկին: — Յեւ վո՞չ մի ժանիք  
 Ինձ չի բաժանի լեներնյան զարից,  
 Ինչպես վո՞չ մի ուժ ինձ չի բաժանի  
 Իմ շունդալից, պայծառ քնարից...

1929. X. 22

Լեներգրադ

## Ց Ա Ն Կ

|                                                 |         |
|-------------------------------------------------|---------|
| ՆԵՐՔՈՂՆԵՐ ՈՒ ԽՈՂԵՐ . . . . .                    | 13—42   |
| ԵԼԵԳԻԱՆԵՐ ՅԵՎ ԱՅԼ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ . . . . . | 43—60   |
| ԵՊԻԲԱԿԱՆ ՖՐԱԳՄԵՆՏՆԵՐ . . . . .                  | 61—82   |
| ԶԱՓԱԾՈ ՆՈՎԵԼԼՆԵՐ . . . . .                      | 83—114  |
| ՄԱՆՐ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ . . . . .              | 115—132 |
| ՆԵՐՔՈՂ ԱՌ ՔՆՆԱԴԱՏՆ Ռ. Ռ. . . . .                | 133—138 |